



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Printed in Turkey

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ



Կ. ԳՈԼԻՍ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ (ԵԱՆԲ)
1914



361

Վ-23

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Բացում ժողովին, եւ վաւերացում
Ընտրութեանց,

ՅՕԴ 1 — Կ. Պօլսի Պատրիարք Բարձրաշնորհ Սրբազանը՝ իբրեւ նախագահ՝ գաղ-
փային ժողովը կը բանայ մայիսի առաջին
եօթնեկին մէջ:

Բացման ճառով ընդհանուր տեսութիւն
մը կուտայ ազգային գործոց նախընթաց տար-
ւոյն վիճակին վրայ, և ժողովին ուշադրու-
թեանը կը յանձնարարէ ատենական նոր շրջ-
անն զբաղելու գլխաւոր խնդիրները:

Ատենական շրջանը մարտի վերջերը կը
լինայ, յորում ժողովը կը փակվի, յորում
սահմանադրապէս լուծանելի երեսփոխանաց
պաշտօնը կ'աւարտի, եթէ ժողովին մասնա-
կի վերանորոգումը այն տարւոյն հանդիպի:

Նոր ընտրութիւնք՝ ժամանակին սկսելով
ապրիլին կ'աւարտին:

Վարչութեան տարեկան համարատուու-
թեան ժամանակը կը համարի:

Իբրեւ նախապատրաստութիւն՝ զոր նա-
խագահ Սրբազանը կը հոգայ, բացումէն ա-
ռաջ պէտք է պատրաստ ըլլան:

ա՝ Ընտրութեանց տեղեկագիրները, որ
առաջին նիստին օրակարգն է դիւանին կազ-
մութեան հետ:

բ՝ Վարչութեան իւրաքանչիւր ճիւղին
տարեկան համարատուութիւնը, որ առաջին
վիճարանելի խնդիրն է դիւանաց կազմութե-
ան հետքը:

Յօդ. 2 — Բացման ճառէն անմիջապէս
ետքը՝ Նախագահ Սրբազանը կը հրաւիրէ ե-
րեսփոխանաց երիցագոյններէն մէկը առժամ-
եայ ատենապետ բազմիլ, և կրտսերագոյն մը՝
ատենադպրութեան պաշտօն վարել:

Այս առժամեայ դիւանին գործն է՝ վա-
ւերացում ընտրութեանց, և կազմութիւն
Մայր Դիւանին:

Յօդ. 3 — Ժողովը չվաւերացներ զայն
ընտրութիւնը որ ընտրեալին յանձնառութիւնն
ապահովող ծանօթագիր չ'ունի ընտրող ժողո-
վին կողմէն, և ընտրելութեան պայմաններն
ապահովող ծանօթագիր չ'ունի ընտրող ժողո-
վին կողմէն, և ընտրելութեան պայմաններն
ապահովող ծանօթագիր՝ Պատրիարք Սրբազա-
նին կողմէն:

Ընտրութեանց տեղեկագիրները՝ որ Նա-
խագահ Սրբազանին ուղղեալ են ընտրող ժո-
ղովներէն, ապահովութեան ծանօթագրով մը
իւր Սրբազանութեան կողմէն դիւանին կ'ա-
ւանդուին:

Ատենագիրը կ'ընթեռնու զանոնք, և
դիտողութիւններ՝ եթէ կան՝ կ'ըլլան. ժողո-
վը կ'արտասանէ իր վճիռը ընտրութեանց օ-
րինաւորութեանը վրայ, և Ատենապետը ե-
րեսփոխան կը հռչակէ այն անունները որոց
իշխանութիւնը վաւերական դատված է:

Նախագահ Սրբազանը կը հրաւիրէ ան-
միջապէս նորընտիր երեսփոխանները՝ եթէ
ունկնդրաց մէջ են, զալ տեղ աւանուլ և բազ-
միլ: Եթէ չ'են, յատուկ նամակաւ կը ծա-
նուցանէ իրենց ընտրութեան վաւերացումը և
կը հրաւիրէ զանոնք յաջորդ նիստին ժողովին
աշխատութեանց մասնակցիլ:

Օրինաւորութեան թերութիւն ունեցող
տեղեկագիրը Նախաձեռնութեան դիւանին կը
յղվի, և վաւերացումն ուրիշ նիստի կը մնայ:

Անմիջապէս կը ձեռնարկվի Մ. Դիւանին
կազմութեանը, եթէ ժամանակը ներէ և ժո-
ղովն ուզէ. եթէ ոչ՝ ութ օրէն վերստին կը
գումարուի նիստը ի ներկայութեան նորըն-
տիր անդամոց, օրակարգ ունենալով 1. Կազ-
մութիւն Մ. Դիւանին, 2. Կազմութիւն Նա-
խաքննիչ դիւանաց:

Կազմութիւն Մայր Դիւանի

Յօդ. 4 — Ժողովին ղեւանը՝ որ և Մայր դիւան կ'ըսուի միւս ղեւաններուն նըկատմամբ, կը բաղկանայ մէկ ատենապետէ, երկու դեր ատենապետէ (*) և երեք ատենադպրէ. որունք մէկ շրջանի համար կ'ընտրուին և վերնորելի են:

Յօդ. 5. Ատենապետը առանձին կ'ընտրուի բացարձակ առաւելութեամբ: Իսկ երկու դերատենապետները միասին կ'ընտրուին բազմանուն քուէով (յօդ. 47), նոյնպէս և ատենադպիրը:

Ասոնք իրենց ստացած քուէից առաւելութեան կարգովը՝ իբրեւ առաջին, երկրորդ և չ. կը նկատուին:

Երկու դարձ քուէարկութենէ ետքը, և տատանում պատահած ատեն, համեմատական առաւելութիւնը կը բաւէ:

Քուէից հաւասարութիւն պատահած ատեն՝ ատենապետաց երիցագոյնն ընարեալ է և ատենադպրաց կրտսերագոյնը, եթէ վիճակ չպահանջվի գոնէ երկու ձայնով. Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով, առանց վէճի:

Երբ Դիւանին մէջ հրաժարում պատահի (յօդ. 111). եթէ հրաժարողը ատենապետն է նոր ընտրութիւն կ'ըլլայ. բայց եթէ երկրորդն է հրաժարողը, երրորդը երկրորդ կ'ըլլայ, և նոր երրորդը մը կ'ընտրվի: Իսկ եթէ ատենադպիրներէն մէկը հրաժարի, հետեւորդն անոր տեղ կ'անցնի և երրորդ ատենադպիր մը ընտրվի:

Յօդ. 6. Ատենադրութեանց արձանագրէն զատ ղեւանն ունի երեք տօմար՝ խընդրոց կարգի տօմար, խօսից կարգի տօմար, ներկայութեան տօմար. զորոնք առաջին ատենադպիրը կը բաշխէ իր պաշտօնակցաց, հսկելով անոնց վրայ իբրեւ ընդհանուր ատենադպիր:

Մայր ղեւանին կազմութենէն ետքը եթէ ժամանակը չը ներէ՝ նիստը կը վերնայ, ութ օրէն վերստին գումարուելու պայմանաւ՝ Նախաքննիչ ղեւանաց կազմութիւնն ընելու համար, որ իբրեւ ատենական խնդիր՝ միշտ բարիպողական է Ժողովին համար, որ չի կըրնար գործի սկսիլ իր ղեւանաց կազմութենէն առաջ:

(*) Հրահանգ. — Դերատենապետները Դիւանը չ'են բազմիւր, այլ միայն բացակայութեան ատեն Ատենապետին փոխանորդելու համար:

Կազմութիւն Նախաքննիչ Դիւանաց

Յօդ. 7. Ժողովին մէկ մասը ղեւաններու կը բաժնուի, որոնք տարիէ տարի կը նորոգվին:

Ժողովն իր աշխատութեանց ղեւորութեան և արդիւնաւորութեանը համար՝ իր ղեւաններուն յատուկ ձեռնհասութեանը կը յանձնէ վիճարանելի խնդրոց նախապատրաստական քննութիւնը:

Այս ղեւանները՝ Ձեռնհաս կամ Նախաքննիչ ղեւաններ ալ կը կոչուին, որք են՝

ա՝ Ձեռնհասութեան ղիւան՝ կրօնական կամ խառն նիւթոց քննութեանը յատկացեալ:

բ՝ Դաստիարակութեան ղիւան՝ կրթական կամ դպրոցական խնդրոց քննութեանը յատկացեալ:

գ. Կարուածոց ղիւան՝ վանքի, հիւանդանոցի, կտակաց և ո՛ր և է կալուածական խնդրոց քննութեանը յատկացեալ:

դ. Համարակալութեան ղիւան՝ տարիական պիւտձէին, հանդանակութեան, և ո՛ր և է ելմտական խնդրոց քննութեանը յատկացեալ:

ե. Յարաբերութեան ղիւան՝ թաղական և գաւառական խնդրոց և աղերսագրոց քննութեանը յատկացեալ:

զ. Իրաւասութեան ղիւան՝ հովական ավթոց վերաբերեալ և վարչական խնդրոց քննութեանը յատկացեալ:

է. Նախաձեռնութեան ղիւան՝ օրինական և կանոնական խնդրոց քննութեան յատկացեալ:

ը Խմբագրութեան ղիւան՝ օրինական և կանոնական ծրագրաց կամ յօդուածոց գրական վերաքննութեանը յատկացեալ:

Բայց ասոնցմէ՝ Ժողովն ըստ հարկին և առժամայ կերպով յատուկ մասնաժողովներ կը կարգէ՝ սովորաբար 5էն ցը 7 անդամէ. զոր օրինակ՝ Սահմանադրութեան կամ կանոնադրութեան վերաքննութեանը համար, դատաստանի մը համար, ևլ. որոց ընտրութիւնը ղեւանաց ընտրութեան պէտ կ'ըլլայ, իսկ պաշտօնին իրենց տեղեկագրին հետ կը վախճանի:

Յօդ. 8. Դիւանները (ինչպէս անունը կը ցուցնէ) երեքական անդամէ կը բաղկանան:

և անդամաց ընտրութիւնը՝ իւրաքանչիւր ղեւանի համար սրբագրելի ընդհանուր ցանկի մը վրայ կ'ըլլայ, զոր Մ. Դիւանը կը ներկայէ Ժողովին և Ժողովը ցանկը սրբագրելով մէկ դարձ քուէարկութեամբ կ'ընտրէ զամենը համեմատական առաւելութեամբ միայն (*) (յօդ. 47, գ. 1):

Դիւանի մը անդամը ուրիշ ղեւանի մ'ալ և մասնաժողովի մ'ալ անդամ կրնայ ըլլալ, բայց ի Ժողովին ատենապետէն:

Ինձնիւր ղեւան ինք կը կարգէ իր ատենապետը ու աւելնադպիրը, և յանձնված խնդիրը քննելէն ետքը՝ կ'որոշէ զիւր տեղեկարբը:

Դիւանները կուտան և իրենց ատենապետաց անունները Մ. Դիւանին, որ կը հաղորդէ Ժողովին՝ ղեւաններու ատենապետաց ցանկը:

Յօդ. 9. Դիւաններն իրենց աշխատութեանց կարգին մէջ Ժողովին օրակարգին պէտք է հետեւին, և իրենց յանձնեալ քննութեան արդիւնը կարելի եղածին չափ շուտ պէտք է հասցնեն Ժողովին, մանաւանդ երբ ստիպողութիւն կայ:

Յօդ. 10. Դիւան թէ մասնաժողով տեղեկագրով մը և տեղեկարբի մը միջնորդութեամբ կը ներկայնն Ժողովին իրենց աշխատութեան արդիւնք, որ տեղեկագրին վերջը կըրակացութեամբ կ'ամփոփի:

Յօդ. 11. Առաջարկութեան մը հեղինակը իրաւունք ունի ընկերակցելու խորհրդակից ձայնով՝ զայն առաջարկութիւնը քննող ղեւանին կամ մասնաժողովին նիստերուն:

Եթէ քանի մը հեղինակներ են մի և նոյն առաջարկութեան, մէջերնէն մէկը կ'որոշեն զիրենք ներկայացնող:

Յօդ. 12. Եթէ խնդրի մը վրայ տեղեկութիւն ստանալու համար՝ հարկ ըլլայ, ղեւաններն ուղղակի կը հաղորդակցին՝ վարչութեան ղեւաններուն հետ՝ իրենց ատենապետին, ատենադպրին կամ տեղեկարբին միջնորդութեամբ:

(*) Հրահանգ. — Որքան ղեւան կամ՝ ամբան հատնած կայ մէկ ցանկի վրայ գծով դատված իւրաքանչիւր հատված երեք անուն կը պարունակէ: Մէյմէկ օրինակ այս ցանկէն բարապանք կը ցուեն երեսփոխանաց, որք ամէն մէկ հատվածը զատ զատ սրբագրելով և ընդհանուր ցանկը ծախելով քուէտուփը կը ձգեն:

Նոյնպէս Բարձրաշնորհ Սրբազանը՝ ժողովային գործի մը համար ըստ հարկին՝ ղեւաններէն մէկը կամ մէկ քանին՝ կամ ատենապետները միայն ի խորհրդակցութիւն կը հրաւիրէ իր քով:

Յօդ. 13. Դիւանաց ատենապետները կրնան միանալ առժամայէս և Ատենապետաց Դիւան կազմել՝ որ և Համագումար Դիւան կ'ըսվի, ազգային խիստ կարեւոր կամ յարաբերական ծանր խնդրի մը նախաքննութեանը համար:

Ժողովը կ'որոշէ Համագումար Դիւանի մը պէտքը, և Մ. Դիւանին Ատենապետը զանի կը գումարէ իր նախագահութեամբ:

Ատենապետաց ղեւանը պէտք է ըստ կանոնի՝ Պատրիարքի ընտրութեան, ամբաստանութեան և հրաժարման խնդրոց նախաքննութեանը համար (տես յօդ. 47, 84, 87):

Համագումար ղեւանին վարմունքը նոյն է որպէս միւս ղեւաններունը. (տես վերոգրեալ յօդուածները):

Ատենական կանոն

Յօդ. 14. Ազգային ժողովը նիստ կ'ընէ քանի որ ունի օրակարգ՝ կանոնադրապէս երկու շաբաթն անգամ մը, ուրբաթ օր, Ղալաթիոյ Ժողովարանը. ժամը 6էն մինչև 10. (տես բացատրութիւնը 6 և 53 յօդուածոց մէջ):

Նախագահ Սրբազանը կրնայ ըստ հարկին արտաքայ կարգի ժողով գումարել ուրիշ օր մը:

Նախագահ Սրբազանին կողմէն երեսփոխանք ի ժողով կը կոչվին գոնէ երկու օր առաջ, օրագրաց միջոցով կամ յատուկ կոչնագրով, յորում յիշեալ պէտք է ըլլայ նիստին տեղը, որոշեալ ժամը և օրակարգը:

Երբ որ օրակարգն սպառի, նիստերը կը դադրին, բայց Ժողովը բաց կը համարվի ըստ առաջին յօդուածին կանոնադրութեան:

Յօդ. 15. Ատենան կը բացուի ճիշդ որոշեալ ժամուն, և նախընթաց ատենադրութիւնն ընդունելութեան կը դրուի՝ ի ներկայութեան ո՛ր և է թիւի անդամոց:

Դիտողութիւն ունեցող բացակայ ատենաբանք իրաւունք չ'ունին բողոքելու:

Յօդ. 16 — Ատենապետը կը բանայ և կը փակէ զատենանը :

Իր պաշտօնն է՝ վիճակները նուրբիւններն ուղղել, ատենարանից կարգով խօսք տալ, Կանոնադրութեան պահպանութեանը հսկել, և ժողովն ըստ կանոնի ղեկավարել :

Առաջին ատենապետին բացակայութեան ատեն՝ երկրորդին կը մնայ այս պաշտօնը, և երկրորդին բացակայութեանը՝ երրորդին :

Յօդ 17 — Ատենապետաց պաշտօնն է իրարու օգնութեամբ ատենական գրութեանց հոգ տանիլ, և նիստի մ'ատենագրութիւնը ամփոփ ու ըստ կարի ճիշտ խմբագրելու՝ հետեւեալ նիստէն գոնէ 24 ժամ առաջ տպեալ հասցնել երեսփոխանաց ամէն մէկուն : Այս հոգը զխաւարագէտ առաջին ատենագրութիւն կը պատկանի, միւսներն իրենց յանձնուած տօմարներով զբաղեալ (յօդ. 6) :

Յօդ 18 — Եթէ դիպուածով՝ ատենագրութիւնը չ'է կրցած ժամանակին ցրուիլ, ընթերցու մը յատենի կ'ըլլայ, և ատենապետ ու ատենագրութիւնը իրարմէն ընդունելութեանէն ետքը : Տպեալներն ստորագրեալ են՝ յաջորդ նիստին մէջ ընդունուելու համար :

Ատենագրութիւնն ուրիշ բան չ'է քան նիստի մը մէջ անցածին ըստ կարի ճիշտ պատկերը : Դիտողութիւնն անոր անձիշտ երեւցած կէտերուն վրայ միայն կրնայ ըլլալ : Դիտողութեան առթիւ՝ անցեալէն թել մը բռնելով անկէ նոր խնդիր հանելը՝ խնդրէն շեղիլ է և անհարկ (յօդ. 24, 25) :

Դիտողութեանց կը պատասխանէ խմբագիր ատենագիրը, եթէ հարկ կայ պատասխանելու. բայց թէ՛ բողոքող և թէ՛ պատասխանող մէկ անգամ կրնան խօսիլ :

Ատենագրութեան ընդունելութիւնը ձեռամբարձով կ'ըլլայ :

Յօդ 19 — Ատենագրութեան ընդունելութեանէն ետքը՝ օրակարգին չ'անցած՝ Ատենապետը կը հաղորդէ ժողովին անոր վերաբերեալ թուղթերը, և ժողովը՝ Ատենապետին առաջարկութեանը վրայ յղումները կ'արտասանէ (1) :

(1) Հրահանգ. — Ժողովին արտասանած յղումները՝ ուր որ ըլլան՝ Ատենապետը կը հրամայէ սա բաւերով, զոր օրինակ՝

«Ժողովէն առ իւր դիւան (այս անուն) ի նախաքննութիւն :

(Թվական նիստին) Ատենապետն (Ստորագրութիւն) :

Կամ՝ Աղբալին ժողովէն առ իւր Գործադիր Եւխանութիւն,

Կամ՝ առ իւր Վարչութիւն և Եւն. և Երեսփոխանութիւն :

(Թվական եւ ստորագրութիւն) :

Ժողովին մատուցեալ ո՛ր և է թուղթ՝ կամ նախագահին ուղղեալ կամ ուղղակի Ատենապետին՝ Մ. Իււանին վրայ կ'աւանդվին :

Յօդ 20 — Ժողովէն ոչ ոք անդամ կրնայ խօսիլ՝ Ատենապետէն խօսք չը խնդրած ու չ'առած :

Ատենապետը երբ իրր անդամ խօսիլ ուզէ, դեր-ատենապետին կը թողու աթոռը, ինք ալ իր կարգին խօսք կը խնդրէ ու բեմը կ'ելնէ, և նոյն խնդրին համար ա՛լ չը բազմիր ատենապետ :

Յօդ 21 — Ատենաքանք նշանակել պէտք է տան Դիւանին՝ անուններն, ձառելու խնդիրներն, թեր կամ դէմ խօսելիքներն :

Սօսից կարգի տօմարակալը՝ (կամ ուրիշ ատենագրութիւնը) կը նշանակէ խօսք խնդրողները առաջնութեան կարգով, թեր ու դեմ խօսողաց շարքն որոշելով :

Յօդ 22 — Վիճաբանութեանց մէջ ատենաքանք փոխադարձ կարգով կը խօսին թեր ու դեմ. այսինքն թեր խօսող մ'այ, այլ դէմ խօսող մը կուզայ. նոյնպէս և անպատասխան խօսողի մը կը յաջորդէ խնդրին ի նպատակ խօսող մը. և այսպէս փոխառած յաջորդութեամբ կը շարունակէ վիճաբանութիւնը :

Յօդ 23 — Ատենաքանք պէտք է բեմ ելնէ ու անկէ խօսի. եթէ (անձնական տկարութեան մը պատճառով կամ խիստ կարճ բացատրութեան մը համար) Ատենապետը բացառութեամբ չը ներէ անոր՝ իր տեղէն խօսելու : Նախագահ Սրբազանը միայն իր աթոռէն կը խօսի, և երբ խնդրէ՝ խօսքն իրն է :

Յօդ 24 — Ատենապետը խնդրէն դուրս ելնելու չ'է. եթէ շեղի Ատենապետը՝ զանի ի խնդիր կը կոչէ :

Ոչ ոք կրնայ խօսք առնուլ ի խնդիր կոչման վրայ :

Յօդ 25 — Երբոր ատենաքանք մը երկու անգամ ի խնդիր կոչուի մի և նոյն ճառին մէջ, ժողովը կրնայ՝ ատենապետին առաջարկութեանը վրայ՝ արգիլել զանի խօսքէն նոյն խնդրին վրայ նոյն նիստին մէջ : — Ժողովը կը յայտնէ՝ զիւր կամքը ձեռամբարձով, առանց վէճի :

Յօդ 26 — Նոյն խնդրին վրայ՝ երկու անգամէն աւելի չը խօսվիր. և խնդրողին

Ատենապետը չկրնար ներել առանց ժողովին հաճութեան. ի բաց առեալ են առաջարկութեան մը հեղինակն ու տեղեկաբերը :

Յօդ 27 — Սօսքը չը զլացուիր անձնական դէպի մը համար խօսիլ ուղղով (1), կամ կանոնադրական դիտողութեան մը համար :

Յօդ 28 — Ո՛ր և է ընդմիջում, ո՛ր և է անձնականութիւն, բեմական բարբառի անվայել ո՛ր և է բառ կամ բացաբանչութիւն արգիլեալ է և անհարկի :

Արգիլեալ է նոյնպէս Տէրութեան աշխարհավարութեան վրայ քննադատական ակնարկութիւնք :

Յօդ 29 — Տառն անդամոց խնդրանօք՝ որ համառօտ պատճառաբանեալ պէտք է Ատենապետին ձեռքը տրուի, ձեռամբարձով առանց վէճի ժողովը կ'որոշէ միթէ դուրսիակ նստիլ կ'ուզէ (յօդ 81, 82) :

Յօդ 30 — Ատենը փակ յայտարարելէն առաջ Ատենապետը կը կարգադրէ՝ ժողովին խորհուրդն առնելով. ի ներկայութեան որ և է թիւի անդամոց, յաջորդ նիստին օրն ու օրակարգը, որ ատենագրութեան մէջ կ'արձանագրուի, և օրագիրք կը հրատարակեն :

Ե ԳԼՈՒԽ

Քրեարկութիւն, եւ որոշում

Յօդ 31 — Նախավճիռ միշտ կրնայ առաջարկվիլ (2) :

(1) Զորքինակ՝ խօսքի առաջնութեան համար, քրեկի սխալ մ'ուղղելու համար, անընդունելի բառի մը կամ թիւը մեկնուած իմաստի մը սրբագրութեան համար, և լին : Սոյն պարագայից մէջ եթէ պատասխանելու տեղի կայ, որու որ անկէ անի միայն կը պատասխանէ. բայց թէ՛ բողոքող թէ՛ պատասխանող մէկ անգամ կրնան խօսիլ :

(2) Բեմական լեզուի մէջ նախավճիռ կամ նախկարգ վճիռ կ'ըսվի՝ խնդիր մը որոշման տեղի ունենալ կամ մանաւանդ չ'ունենալը յայտնելը :

Հրահանգ. — Ժողովը ժամավաճառ չ'ընելու համար նախավճիռ կ'առաջարկվի, զորքինակ՝ կրօնական կամ քաղաքական խնդրոց մէջ ձեռնհասութեան համար, սահմանադրական սկզբունք մը համար, արդէն որոշեալ կէտի մը համար (յօդ 73), և կամ երբ վիճելի կէտը զխաւար խնդրի մը հետ այն ատիճան կապակցութիւն ունի որ մէկը չը լուծվիր առանց միւսը յուղելու, և այն միւսը դաւուր է օր մը՝ անի ալ իր ատենին ժողովը զբաղե-

Յօդ 32 — Վիճաբանութիւնն աւարտեալ է ընկանապէս երբ խօսից կարգն ըստ արի և ատենաքանք խօսած ըլլան քանիցս անգամ որ կանոնագրութիւնը կը ներէ : Սակայն եթէ վիճաբանութեան ընթացքին մէջ շատ մը ձայներ քրեկ պահանջեն, Ատենապետը՝ մնացող ատենաքանից անունները յիշեցընելով ժողովին կամքը կը հարցնէ. ժողովը կը պատասխանէ ձեռամբարձով առանց վէճի :

Յօդ 33 — Որոշման մասին քրեկի և օրակարգի պահանջմունք նախադասութիւն ունին գլխաւոր խնդրին վրայ, զորս վիճաբանութիւնը կրնան ընդհատել, այլ՝ զատենաքանին խօսքը ոչ՝ եթէ խօսած ատեն յառնեն այդ պահանջմունք :

Յօդ 34 — Վէճը փակեալ յայտարարելէն առաջ Ատենապետը միշտ կը հարցնէ ժողովին կարծիքը : Եթէ փակման դէմ խօսք ուզվի, մէկ ատենաքանի միայն կը տրուի : Եթէ տարակոյս կայ ժողովին կարծեաց մէջ, երկրորդ փորձէն ետքը, վիճաբանութիւնը կը շարունակուի :

Փակումն արտասանելէն ետքը՝ ալ խօսք չի տրուիր, միայն թէ խնդրին դրութեանը (1) վրայ :

Յօդ 35 — Բարեփոխութիւնք նախադասութիւն ունին գլխաւոր խնդրին վրայ և անկէ առաջ քրեկի կը դրուին :

Յօդ 36 — Արինական կամ կանոնական ծրագիրք և առաջարկութիւնք յօդուած առ յօդուած քրեկի կը դրուին : Ամբողջին վրայ քրեկով կ'աւարտի միշտ որոշումը :

Ճղաւոր խնդիրներու մեջ բաժանումն իրաւունք է երբոր խնդրուի :

Յօդ 37 — Ժողովը իր որոշման ենթարկեալ խնդրոց վրայ վճիռ կուտայ՝ ձեռամբարձով կամ ելունիստով (2), յայտնի քրեկով, գաղտնի քրեկով :

Գնելու. վերջապէս երբ ո՛ր և է անտեղութիւն մը կայ գոր պէտք է բացառել այդ վճիռը առաջարկողը, որով խօսքը միշտ տրվի. և թեր ու դէմ խօսողները լուծվէն ետքը, խնդիր մը կրնայ առանց քննութեան անցնելու՝ մերժվիլ կամ ետ ձգվիլ սոսկ նախկարգ վճառով :

(1) Այսինքն ո՛ր բառերով քրեկի գրվելիքը :

(2) Ելունիստ թէ՛ ձեռամբարձ անխտիր կրնայ գործածել Ատենապետը, բայց ընդհանրապէս ձեռամբարձի առաջին տարակուսելի փորձէն ետքը՝ ուր ձեռքերն համբուլու դժուարութիւն ծագած է, երկրորդ փորձը ելունիստով ընել աւելի սրտիչ համարված է :

Յօդ. 38. Ձեռամբարձով որոշումն իրաւունք է ամէն խնդրոց համար, բաց այն կէտերէն զոր ներկայ կանոնադրութեան 40, 41, և 43 յօդուածք կը նախատեսեն իրբեւ բացառութիւն:

Յօդ. 39 — Ձեռամբարձով որոշումը կը կատարուի՝ թեր ու դէմ կարծեաց կողմէն զատ զատ ձեռք վերցնելով (փորձ ու հակափորձ), զոր դիւանին անդամք կը համրեն ու կը հաստատեն:

Եթէ հաստատեն թէ տարակոյս կայ՝ փորձը նորէն կը կրկնուի:

Ո՛չ ոք կրնայ խօսք առնուլ երկու փորձերու միջեւ, և ոչ իսկ երկրորդ փորձին ու ջրէտարկութեան միջեւ:

Յօդ. 40 — Յայտնի քրէն իրաւունք է՝

- 1. Երկու տարակուսելի փորձերէն ետքը,
2. Օրինական ծրագիրներու կամ առաջարկութեանց համար:

Յօդ. 41 — Յայտնի քրէ կրնայ խընդրուիլ ամէն նիւթի համար:

Ի բաց առեալ են սա կէտերը. օրակարգի որոշում, ատենադրութեանց ընդունելութիւն, ընտրութեանց վաւերացում, հրատարմանց ընդունելութիւն, առաջնութիւն կամ նախադասութիւն. յղում, օրաձգում, վիճաբանութեան փակում, և ստիպողութեան նըկատառում:

Յօդ. 42 — Յայտնի քրէ կրնայ խընդրվիլ թէ՛ ձեռամբարձ որոշումէ առաջ և թէ՛ առաջին տարակուսելի փորձէն ետքը:

Կրնայ նաեւ խնդրվիլ ձեռամբարձ որոշումէն ետքը, եթէ օրինական ծրագրի կամ առաջարկութեան մը վրայ է տրվելիք վըճիւրը:

Յօդ. 43 — Յայտնի քրէ խնդրումը գրով պէտք է ըլլայ՝ գոնէ 3 անգամէ ստորագրեալ և Ատենապետին ձեռքը տրուած:

Թէ՛ ստորագրողաց և թէ՛ թեր ու դէմ քրէտարկուաց անունները պէտք է ատենադրութեանց մէջ անցնին, նոյնպէս և ձեռնպահից և բացակայից անունները:

Յօդ. 44 — Յայտնի քրէտարկութիւնը կը կատարվի սա հետեւեալ կերպով.

Ատենապետը կը հրաւիրէ երեսփոխանները որ տեղեկանին նստին: Անձնիւր երեսփոխան երկու քրէտարկութիւն ունի որոց վրայ իր

անունը տպեալ է: Սպիտակագոյն քրէթուղթները ընդունելութիւն կը նշանակին, կապուտագոյնները չընդունելութիւն:

Բարապանք կը ներկայեն անձնիւր երեսփոխանի՝ զոր անուանէ կը կոչէ ներկայութեան տօմարակալ ատենադպիրը՝ քրէտարկութիւնը որոց մէջ կը ձգէ իր քրէթուղթը:

Անուանց ցանկը սպառելէն ետքը անմիջապէս կրկին կը կոչէ ատենադպիրն այն անունները որք քրէ է չին տված: Անուանական կոչման չը պատասխանողը բացակայ կը նշանակուի, յայտնած պատճառովը, եթէ ունի (տե՛ս յօդ. 107):

Երբոր քրէտարկութիւնը հաւաքուած են, Ատենապետը փակեալ կը յայտարարէ ըզքրէտարկութիւնը: Քրէտարկութիւնը անմիջապէս բեմին վրայ կը բերուին: Ատենադպիրք քրէտարկութիւնը կ'ընեն, և Ատենապետը կը հռչակէ՝ զարդիւնը. այսինքն քանի քրէ է վրայ, քանի քրէ է դէմ, քանի քրէ է ընդունվիլ կամ չընդունվիլը:

Եթէ երեք անգամ խնդրեն թէ քրէտարկութիւնը բեմին վրայ ըլլայ, Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի:

Յօդ. 45. Այն ամեն պարագայից մէջ ուր յայտնի քրէ կրնայ կամ պարտ է ընդունվիլ, եթէ 5 անգամ գողտնի քրէ խընդրեն, պէտք է որ շաղտնի ըլլայ:

Գաղտնի քրէն ալ յայտնի քրէին պէս կը խընդրվի (տե՛ս յօդ. 43):

Խնդրանքն ստորագրողաց անունները ատենադրութեան մէջ կ'անցնին, նոյնպէս և ձեռնպահից ու բացակայից անունները:

Յօդ. 46 — Գաղտնի քրէտարկութիւնը կը կատարվի սա հետեւեալ կերպով.

Անձնիւր երեսփոխան կ'առնէ երկու գնտակ, մէկը ձերմակ՝ որ ընդունելութիւն կամ այո՛ կը նշանակէ. միւսը սե որ չընդունելութիւն կամ ո՛չ կը նշանակէ: Անուանական կոչման կարգով անձնիւր քրէ կը ներկայանայ, բեմին վրայ դրուած սափորի մը մէջ՝ կը ձգէ իր քրէն նշանակող գնտակը. իսկ միւս գնտակը որ նշանակութիւն չ'ունի, կը տանի կը ձգէ ուրիշ սափորի մը մէջ՝ որ ատենադպրաց դիւանին վրայ դրուած է:

Քրէտարկութեանց ետքը՝ ամէն մարդ կ'անցնի իր տեղը կը նստի:

Ատենադպիրք կողովի մը մէջ կը պարպեն բեմին վրայ սափորը. ամէնուն ցուցը-

նելու կերպով կը համրեն գնտակները, և ձերմակները սեւերէն կը դատեն (*):

Գոնէ երկու ատենադպիր կը հաստատեն այս համրանքին արդիւնը, զոր Ատենապետը կը հռչակէ:

Յօդ. 47 — Ժողովին մէջ ընտրութիւնք գաղտնի քրէով կ'ըլլան, և քրէտարկութիւնը չորս քննիչներու ձեռք կը կատարվի որոնք վիճակով կը հանուին:

ա. Միանուն է քրէն՝ երբոր մէկ քրէ է ընդունվիլ անուն կ'ուզվի ընտրել, և քրէթուղթը մէկ անուն պարունակելու է:

Բազմանուն է քրէն՝ երբոր մէկ քրէ է ընդունվիլ անուն կ'ուզվի ընտրել, և քրէթուղթը այնքան անուն պարունակելու է որքան որ կ'ուզվի ընտրել:

Բազմանուն քրէթուղթները՝ եթէ ուզված թիւէն աւելի անուն պարունակեն՝ ընդունելի են. բայց միայն՝ առաջիններէն ուզված թիւը կ'առնվի, ետքի աւելորդը չի համրուիր:

բ. Ժողովին մէջ ընտրութիւնները՝ Մ. Դիւանին՝ ատենապետին զատ որ անցանկ կ'ընտրվին թէ՛ միանուն և թէ՛ բազմանուն քրէ է ընդունվիլ (յօդ. 6), ներկայեալ ցանկի մը վրայ կ'ըլլան, որ կամ գեղջիլի է կամ սրբագրելի:

գ. Սրբագրելի ցանկը՝ այնքան անուն կը պարունակէ որքան որ ընտրել կ'ուզվի, որոց մէջ քրէտարկութիւնը չ'ուզած անուններն կ'աւրեն տեղը ուզածին կը գրեն:

Մէկ դարձ քրէտարկութեամբ համեմատական առաւելութիւնը միայն կը բաւէ:

դ. Չեղջիլի ցանկը՝ եթէ մէկ անուն ընտրել կ'ուզվի մէջէն՝ գոնէ կռապատիկ անուն պարունակելու է. եթէ մէկէն աւելի կ'ուզվի ցանկը երկպատիկ անուամբ կը բաւէ: Նախ այս ցանկը քրէ է կը դրվի. և յետոյ քրէտարկութիւնը կը զեղջիլն այս ցանկէն աւրելով չ'ուզած անուններն, բայց տեղը անուն չեն կրնար դնել:

Երկու դարձ քրէտարկութեանց ետքը՝ համեմատական առաւելութիւնը կը բաւէ:

(*) Հրահանգ. — Գնդակի պակասութեան ատեն, առ հարկի մարթ է նաեւ թուղթի կտորներով կատարել այս գործողութիւնը, անձիւր անգամ՝ դրացւոյն չըցուցնելու դեռութեամբ և ընթեռնելի կերպով իր այո՛ն կամ ո՛չը թուղթի կտորի մը վրայ գրելով: Այն ատեն երկու սափորի ալ հարկ չը կայ:

Չեղջիլի ցանկը պէտք է կոչնագրին հետ հաղորդեալ ըլլայ երեսփոխանաց, որպէս զի ժամանակ ունենան ընտրելեաց վրայ պէտք եղած ծանօթութիւններն ստանալու:

ե. Դիւանաց և մասնաժողովոց ընտրութիւնը սրբագրելի ցանկի վրայ կ'ըլլայ զոր Մ. Դիւանը կը ներկայէ և Ժողովը կը սրբագրէ:

զ. Վարչութեան անդամոց ընտրութիւնը չեղջիլի ցանկի վրայ կ'ըլլայ, զոր Համագումար Դիւանը Պատրիարքին հետ խորհրդակցութեամբ կը պատրաստէ և Ժողովը կը զեղջիլէ (*):

հ. Պատրիարքի ընտրութիւնը բացարձակ առաւելութեամբ կ'ըլլայ՝ չեղջիլի ցանկի վրայ, զոր վարչութիւնը կը ներկայէ՝ Սահմանադրութեան պահանջած կրօնական ու քաղաքական պայմանաց ապահովութեան ծանօթագրով՝ մը, և միանգամայն ընտրելեաց բնցեալն ու արժանիքը պատճառարանող համառօտ տեղեկագրով մը. զոր ատենապետաց դիւանը կը նախաքննէ (13):

Այս դիւանն իր դիտողութեամբ կ'եզրակայէ իր կարծիքը՝ կամ անսրբագիր ընդունելութեան ցանկին, կամ սոսկ փոփոխութեամբ արժանեաց կարգին, և կամ սրբագրութեան արժանեաց կարգին: Ժողովն այդ առաջարկեալ զոր կ'առաջարկէ: Ժողովն այդ առաջարկեալ փոփոխութիւն կամ սրբագրութիւնը կ'ընդունի կամ կը մերժէ ձեռամբարձով առանց վէճի, և յետոյ ըստ այնմ կը զեղջիլէ ցանկն իր քրէ է ընդունվիլ:

Քրէից հաւասարութիւն պատահած ատեն՝ երիցագոյնն ընտրեալ է, եթէ վիճակ չը պահանջվի գոնէ երկրորդող ձայնով. Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի միթէ վիճակը կ'ընդունի:

Սոյն կանոնով կը քննէ Ժողովը պատրիարքական տեղապահութեան ընտրելեաց ցանկը, եթէ իրեն զայ:

Սոյն ձամբէն կ'անցնի Ժողովին մէջ եւ կաթողիկոսական ընտրելեաց ցանկը՝ որ կողմէ որ գայ, և սոյն օրինակ կը մասնակցի Ազգային Ժողովն այդ ընտրութեան:

Յօդ. 48 — Քրէի մասնակցողաց բացարձակ առաւելութեամբ կը գոյանայ Ժողովին որոշումը:

(*) Կրօնականին համար տե՛ս Սահմանադրութեան մէջ իր յօդուածը:

Բարձրաշնորհ Նախագահը քրէի մասնակցելու պարտաւորեալ է, և անուանական կոչում չ'ըլլար իրեն համար:

Ամէն քրէարկութեանց վերջը՝ փակեալ յայտարարելէն առաջ՝ Ատենապետը ժողովին կողմէն կը հարցնէ Պատրիարք Սրբազանին միթէ ունի՞ քրէէ: Իսկ երբոր քրէէ համարի արդիւնը թեր ու գէժ քրէից հաւասարութիւն բերէ, եթէ Պատրիարք Սրբազանը քրէէ տուած է, այն քրէին կողմը կը հակի որոշումը. եթէ չ'է տուած, յայնժամ ատենապետը յանուն ժողովին կը խնդրէ Նորին Սրբազանութեան քրէէն որ կ'որոշէ՝ զորոշումը: Պատրիարք Սրբազանին բացակայութեան ատեն՝ Ատենապետին կը մնայ այս իրաւունքը:

Յօդ. 49 — Ժողովին որոշմանց վաւերականութեան համար՝ երեսփոխանաց մեծածառնութեան ներկայութիւնով հարկւոր է, կամ պակասութեան ատեն՝ անոր որոշող ձայնից միաբանութիւնը:

Երկու աստիճան մեծածառնութիւն կ'ընդունվի, օրինակաց եւ իսկակաց:

Օրինական մեծածառնութիւնն է՝ ամբողջ երեսփոխանութեան Սահմանադրութեամբ որոշուած թիւին (1) կէսէն մէկ աւելին (որ այսօր 71 է):

Իսկական մեծածառնութիւնն է՝ անոր հաւանական թիւին կէսէն մէկ աւելին (որ այսօր 47 է): Եւ հաւանական թիւ կը նկատվի ամբողջ երեսփոխանութեան երկու երրորդը (2):

Այս երկու աստիճան մեծածառնութիւնը իրենց որոշող մասը կամ ձայնն ունին, որ իւրաքանչիւրին համար իր բացարձակ առաւելութիւնն է. 71ին որոշող ձայնն է 36. և 47ին որոշող ձայնն է 24:

Չանդամոց ներկայութիւնը դիւանը կը հաստատէ ներկայութեան տօմարէն զոր երեսփոխանը կ'ըստորագրեն ժողովարան մտած ատենին. և քրէարկութեան ատեն դարձեալ

կ'ստուգէ միթէ ստորագրողը իսկապէս ներկայ են և թէ նիստը լիովին բաւական է որոշման ձեռնարկելու: Եթէ նիստը լիովին բաւական չը գտնվի, ներկայ անդամը կ'որոշեն ձեռամբարձով առանց վէճի միթէ կ'ուզեն որոշող ձայնից միաբանութիւնը՝ հաւանական կարծելով՝ փորձել, կամ թէ իսկոյն անբաւական յայտարարել ժողովը:

Յօդ. 50 — Օրինական մեծածառնութեան ներկայութիւն կը փնտովի, կամ անոր որոշող ձայնից միաբանութիւն՝

- 1 Պատրիարքական ընտրութեան համար
- 2 Պատրիարքական ավրաստանութեան դատական նիստին համար
- 3 Սահմանադրական օրինաց վերջնական որոշման համար:

Եթէ առաջին նիստի մը մէջ չը գոյանայ օրինական մեծածառնութիւն, բայց որոշող ձայները միանան մէկ կողմ, որոշումը վաւերական է: Իսկ եթէ այդ ձայները չը միանան, նիստն անբաւական կը համարվի, և որոշումն իրրեւ չ'եղեալ՝ յաջորդ նիստին կը մնայ, ուր իսկական մեծածառնութեան ներկայութիւնը կը բաւէ կամ անոր որոշող ձայնից միաբանութիւնը:

Յօդ. 51 — Իսկական մեծածառնութեան ներկայութիւն կը փնտովի, կամ անոր որոշող ձայնից միաբանութիւն:

1 Այն խնդրոց համար որոնց համար օրինական մեծածառնութիւնն անգամ մը անբաւական գրտված է (յօդ. 50):

2 Ամեն ընտրութեանց, և այն ամեն ազգային խնդրոց համար որք վիճարանութեամբ լուծելի են:

Ի բաց առեալ են ատենին սկիզբն ըլլալու ատենադրութեան ընդունելութիւնը և ատենին վերջերն ըլլալու յաջորդ նիստի օրակարգին որոշումը (տես յօդ. 15-30): Նոյնպէս ի բաց առեալ են այն անվէճ խնդիրներն ու կէտերը որք ձեռամբարձով առանց վէճի որոշելի են, որոնք ներկայ Կանոնադրութեան յօդուածոց մէջ իրենց տեղը յիշված են, կամ 41 յօդուածին մէջ իրրեւ բացառութիւն նշանակված: Այս խնդիրները՝ որք ուղղակի ազգային չ'են, այլ սոսկ ատենական գործողութիւնը, կրնան որոշվիլ ի ներկայութեան մ'ը և է թիւի անդամոց:

Եթէ առաջին նիստի մը մէջ չը գոյանայ իսկական մեծածառնութիւն, բայց որոշող ձայն

ները միաբանին, որոշումը վաւերական է: Իսկ եթէ չը միաբանին, նիստն անբաւական կը համարվի, և փորձեալ որոշումն՝ իրրեւ չ'եղեալ՝ յաջորդ նիստին կը մնայ, ուր սոսկ որոշող մասին ներկայութիւնը միայն կը բաւէ. զի բացակայք ձեռնպահից կարգը կը սեպվին, չ'ունին իրաւունք բողոքելու, և իրաւունքնին ներկայից թողով՝ ասոնց իրաւունքը բարդեալ կը նկատվի:

Յօդ. 52 — Սոսկ որոշող մասին ներկայութեամբը նստեալ ատենին մէջ՝ ո'չ օրակարգէն դուրս խնդիր ներկի է որոշել և ո'չ իսկ վիճարանութիւնը փակել անկէ դուրս խնդրի մը վրայ, եթէ յուզվի:

Եթէ իսկական մեծածառնութեան որոշող մասին ներկայութիւնը չը գոյանայ, որոշումն անկարելի է, զի վաւերականութեան հիմ չը մնար, և նիստը՝ իրրեւ բողոքովին անբաւական կը վերնայ:

Եթէ մէկ ատենական շրջանի մէջ երկու անգամ տեղի ունենայ այս անակնկալ դէպք, անմիջապէս Նախագահ Սրբազանը յատուկ կոչնագրով ի պարտականութիւն կը կոչէ բոլոր երեսփոխանները՝ յիշեցնելով իրենց Կանոնադրութեան վերջին յօդուածը, որ կը գծէ Նախագահին ընկիւրը, և որ ամենայն իրաւամբ գործադրելի է, եթէ յաջորդ նիստին մէջ անձամբ չը պատասխանվի սոյն կոչնագրին:

Յօդ. 53 — Ամէն անբաւական նիստի հետեւեալ նիստը ուր օրէն զուժարել՝ իրաւունք է և պարտիք:

2. ԳԼՈՒԽ

Խնդրոց կարգ, Օրակարգ, և Ասիպողութիւն.

Յօդ. 54 — Ժողովին բացումէն սկըսեալ՝ վիճարանելի խնդրոց կարգը բնականապէս կուգայ և իրեն յատկացեալ տօմարին մէջ կ'արձանագրվի:

Երեսփոխանական տարեկան ընտրութեանց վաւերացումն ու Մայր դիւանին կազմութիւնը՝ ժողովին առաջին նիստին աշխատանքն են (յօդ. 1):

Գիւնաց կազմութիւնն ու վարչութեան տարեկան համարատուութիւնը՝ երկրորդ նիստին խնդիրներն են (յօդ. 1):

Համարատուութեան կը յաջորդէ բնականապէս տարեկան պիւտձէին խնդիրը, որոյ

քննութիւնն ու սահմանումը հաւանօրէն երրորդ կամ չորրորդ նիստը կը գրուեն:

Ասոնցմէ ետքը կուգան Նախագահական ճառով յատկապէս յանձնարարեալ խնդիրները, որք վարչութեան կողմէն իրրեւ օրինաց ծրարագիր կամ առաջարկութիւն կը ներկայվին, և 'զորս Ատենապետը՝ առաջնութեան կարգով՝ խնդրոց տօմարին մէջ արձանագրել կ'արտօնէ՝ 'զատենադպիրը, ժողովին հաւանութեամբ (1):

Ո'չ ոք կրնայ խնդրոց տօմարին մէջ խընդիր յաւելուլ կամ պակսեցնել առանց ժողովին հաւանութեան:

Ատենապետը խնդրոց տօմարին հետեւելով կը կարգադրէ յաջորդ նիստին օրակարգը (յօդ. 30) որ մէկ նիստի մէջ վիճարանելի կամ կարգը այն աւուր եկած խնդիր ըսել է, որ և կ'ըսուի պարզ ու անխառն օրակարգ:

Յօդ. 55 — Ո'չ մէկ խնդիր կրնայ խառնվիլ պարզ օրակարգին մէջ, եթէ ստիպողութիւնը նկատողութեան չ'առնու և չ'ընդունի ժողովը:

Ո'չ մէկ օրակարգ կրնայ առաջարկվիլ եթէ պատճառաբալ չ'ըլլայ, խմբագրեալ և դիւանին աւուրալ, զոր Ատենապետը կ'ընթեանու ժողովին:

Պարզ ու անխառն օրակարգը՝ եթէ պահանջվի՝ առաջնութիւն ունի միշտ:

Յօդ. 56 — Եթէ պարզ ու անխառն օրակարգն ի բաց առնվի, ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի՝ միթէ կ'ուզէ՞ նրկատողութեան առնուլ և դիւաններուն յղել պատճառարանեալ օրակարգին քննութիւնը:

Եթէ դիւաններուն յղումն որոշվի, տեղ կը ցուցվի խնդրոց կարգին մէջ, և ժողովը նախաքննիչ դիւանին տեղեկագրին վրայ ա'յնպէս կը վարվի որպէս կանոն է վարվիլ ստիպողական նիւթերու մէջ (տես՝ յետագայ յօդուածները):

Յօդ. 57 — Օրինական խնդրոց կամ առաջարկութեան մը ներկայացման ատեն՝ ստիպողութիւն կրնայ խնդրվիլ:

(1) Ծանօթ. — Երեսփոխանաց այս ամբողջ թիւը գրեթէ երբէք և բնականապէս կարելի չ'է ձեռք բերել, պատճառք՝ ընտրութեանց կամ վաւերացմանց յապաղմունք, ճամբորդութիւնը, հիւանդութիւնը, հրատարակումը, վախճանմունք և այլն:

(2) Միւս մէկ երբորքը գրեթէ միշտ բացակայ կամ անպատրաստ համարելի է վերոյիշեալ պատճառանօր: — Այս թիւերն ըստ հարկին կ'աւելնան կամ կը պակսին համեմատապէս՝ եթէ երեսփոխանաց օրինական թիւն աւելնայ կամ պակսի սահմանազրպէս:

(1) Հրահանգ. — Խնդրոց կարգի արձանագրութեամբ կանոնաւոր քննված ըլլալու համար, ամեն մէկ խնդրի էջ մը տարու է եւ վերէն ի վար տօմարածեւ նշանակելու է՝ աւանդում, յղում, քսիպողութիւն, նկատում, մեծում, օրագում, որոշում, ընդունելութեամբ կամ չընդունելութեամբ, հրամանում եւ այս ամեն մէկ ատենական գործողութիւն՝ տեղի ունեցած օրէն թվականեալ:

կրնայ խնդրվի վարչութեան կողմէն, հեղինակին կողմէն, ո՛ր և է երեսփոխանի կողմէն:

Յօդ 58 — Ստիպողութիւն յայտարարել տալու խնդրանքը պատճառաբանեալ պէտք է ըլլայ:

Ժողովն անվէճ կ'որոշէ Ատենապետին հարգման վրայ՝ եթէ տեղի կ'այ ելք տալու ստիպողութեան խնդրանքին:

Յօդ 59 — Եթէ ստիպողութիւնն յայտարարվի, Ժողովին հարցվելէն ետքը դիւաններուն կը յղվի (յօդ 9), և ըստ այնմ վիճաբանութեան օրը կ'որոշվի:

Նախաքննիչ դիւանին տեղեկագրին վրայ՝ Ժողովն անմիջապէս վիճաբանութիւնը կը բանայ և պարզ ձևով (այսինքն միակ քրէտարկութեամբ) մը կը տնօրինէ որոշումը:

Եթէ ստիպողութիւնը չ'ընդունվի, օրինական խնդրոց համար՝ տես 66 յօդ. և պարզ խնդրոց համար՝ 62 և 63 յօդուածները:

Յօդ 60 — Օրինական խնդրի մը կամ առաջարկութեան մը ստիպողական ընթացիկներ կրնայ ետ առնվի՝ երեսփոխանի մը խնդրանքին վրայ՝ Նախաքննիչ դիւանին տեղեկագրին աւանդումէն ետք: Այս ետ առումը ա՛լ չը կրնար խնդրվի վիճաբանութեանց բացումէն ետքը:

է. ԳԼՈՒԽ

Առաջարկութիւնք

Յօդ 61 — Երեսփոխանի մ'ըրած ո՛ր և է առաջարկութիւն՝ օրինական թէ պարզ՝ գրաւոր պէտք է ըլլայ: Ատենապետին կը տրվի որ Ժողովին հաղորդելէն ետքը՝ նոյն խնդրին ձեռնհաս դիւանին նախաքննութեանը կը յանձնէ (յօդ 9 և 10):

Այս դիւանը հակիրճ տեղեկագիր մը կը բերէ, որոյ եզրակացութիւնն է կա՛մ պարզապէս մերժում, կա՛մ օրաձգում, կա՛մ նկատառում:

Սակայն, եթէ գիտնայ այս դիւանը թէ ուրիշ դիւան մը արդէն այնպիսի խնդրով մ'ըբաղեալ է որ կապակցութիւն ունի այդ առաջարկութեան հետ, անդէն ու բերանացի կը խնդրէ Ժողովէն որ այն դիւանին յղվի առաջարկութիւնը:

Յօդ 62 — Եթէ ձեռնհաս դիւանը պարզապէս մերժման կամ օրաձգման եզրակայէ, Ժողովը կ'անցնի իր օրակարգին: Եթէ նկատառման եզրակայէ, նախ՝ զանի կ'որոշէ Ժողովը: Եթէ նկատառումն ընդունի կանցնէ՝ զանի խնդրոց տօմարին մէջ ուր կ'ըստապէս իր օրակարգը և ելք կուտայ առաջարկութեան՝ պարզ որոշման եղանակաւ, եթէ պարզ է առաջարկութիւնը:

Յօդ 63 — Առաջարկութեան մը հեղինակը՝ երբ վէճն անգամ բացված ըլլայ, կրնայ զանի միշտ ետ առնուլ: Բայց եթէ ուրիշ երեսփոխան մը զանի բռնէ, վիճաբանութիւնը կը շարունակվի:

Յօդ 64 — Ժողովէն մերժեալ կամ օրաձգեալ առաջարկութիւնք չէն կրնար մէյ մ'ալ ներկայանալ երեք նիստէ առաջ՝ եթէ նրկատողութեան առված են վեց նիստէ առաջ՝ եթէ առաջին որոշումը մերժեալ են:

Յօդ 65 — Վարչութեան կողմէն ներկայեալ օրինական ծրագիր կամ առաջարկութիւն՝ անդամոց մէկուն ձեռօք Մ. Դիւանին վրայ կ'աւանդվի յետ ընթերցման, եթէ ընթերցում ըլլայ:

Այս ծրագիրները պատճառաբանեալ են, և եթէ կարելի է՝ տպեալ և երեսփոխանաց ցրեալ, որպէս են նաև յատուկ մասնատրոջ մը աւանդեալ սահմանադրական կամ կանոնադրական ծրագիրք կամ յօդուածք:

Ատենապետը՝ սոյն խնդրոց յատկացեալ բեմական նախաձեռնութեան դիւանին կը յղէ՝ զօրինական ծրագիրը կամ առաջարկութիւնը, խնդիրն ուսումնասիրելու և նախապատրաստական քննութիւնն ընելու համար (յօդ. 9 և 10):

Նախաձեռնութեան դիւանին տեղեկագիրը Մ. Դիւանին վրայ կ'աւանդվի յետ ընթերցման, եթէ ընթերցում ըլլայ Ատենապետը կ'առաջարկէ և Ժողովը կ'որոշէ վիճաբանութեան օրը:

Յօդ 66 — Ո՛չ մէկ ծրագիր օրինաց՝ բաց ստիպող գէպերէ՝ չը դրվիր վերջնական քրէտի, եթէ երեք որոշումէ չ'անցնի՝ իրարմէ գոնէ մէկ շաբաթ միջոցով:

Առաջին որոշումը յատկապէս ծրագրին ընդհանրութեանը վրայ կ'ըլլայ Ժողովին կը հարցվի միթէ կ'ուզէ երկրորդ որոշման անցնիլ:

Երկրորդ որոշումը կ'ըլլայ ամեն մէկ յօդ-

ուած քրէտի դնելով, նաև անոնց վերաբերեալ բարեփոխութիւնները, եթէ կան: Ժողովը կ'որոշէ միթէ կ'ուզէ երրորդ որոշման անցնիլ:

Երրորդ որոշումէն ետքը՝ որ ծրագրին բովանդակութեանը և մասնաւոր տրամադրութեանց վրայ կ'ըլլայ, վերջնական քրէտի կը ձեռնարկվի, որն որ կը կնքէ՝ զորոշումը:

Ժողովը կրնայ այս վերջնական քրէտէն առաջ՝ Խմբագրութեան դիւանին յղել ծրագրերը. որպէս զի գլխոց և յօդուածոց դասակարգութեանը նայի և օրէնսդրական ոճին ու յատկաբանութեանց ուշադրութեամբ վերաքննութիւնն ընէ: Այս յղումն իրաւունքն է եթէ ձեռնհաս դիւանը խնդրէ:

Գրական վերաքննութեանէն ետքը մէյ մ'ալ կը կարգացվի Ժողովին, և բացված վիճաբանութիւնը մի միայն խմբագրութեան վրայ կրնայ ըլլալ:

Յօդ. 67 — Բարեփոխութիւնք խմբագրեալ կը տրվին Ատենապետին: Ժողովը քրէտ չը տար ո՛չ մէկ բարեփոխութեան վրայ եթէ՝ բացատրվելէն ետքը՝ չ'ունենայ երկրորդ մը:

Յօդ. 68 — Երկրորդ որոշման միջոցին առաջարկված բարեփոխութիւնը՝ նախաքննիչ դիւանին կամ մասնաժողովին յղել իրաւունքն է եթէ տեղեկագրերը խնդրէ:

Երկրորդ որոշումն փակումէն ետքը ներկայեալ նոր բարեփոխութիւն կամ յաւելում ծական յօդուած՝ երրորդ որոշման բացումէն առաջ հաղորդված պէ՛տք է ըլլայ՝ նախաքննիչ դիւանին կամ մասնաժողովին:

Յօդ. 69 — Եռեակ քրէտարկութեամբ բարդ որոշման տնօրէնութիւնը պիտու՛նէ խնդրոց և տեղեկան օրինաց համար չ'է. առնք դրոյ և տեղեկան օրինաց համար է որ ընդհանուր ազգին այն կէտերուն համար է որ ընդհանուր ազգին մէջ իբրև օրէնք պիտ' իշխեն. ինչպէս ընտրական օրէնք, հանգանակութեան օրէնք, դատարանական օրէնք, իրաւանց ու պարտեաց րակութեան օրէնք, իրաւանց ու պարտեաց արդար սկզբունքէն բղխեալ այն տրամադրութիւնք՝ որ կայսերական ընդհանուր օրինաց համաձայն՝ ազգային վարչութեան ընթանալու շաւիղը կը գծեն և անհատից յարգըն ու պատկառանքը կը պահանջեն:

Յօդ. 70 — Այն օրինաց համար՝ որք բարեփոխութեան պատճառով պարզ որոշման եղանակին ենթարկեալ են (յօդ. 59), Բար-

ձրաշնորհ՝ իբրև գործադիր իշխանութեան Պետ՝ իրաւունք ունի երկրորդ որոշում մ'ալ խնդրելու՝ զոր պատճառաբանեալ դիտողութեամբ կը յայտնէ Ժողովին:

Յօդ. 71 — Եթէ երեք որոշմանց մէկուն մէջ մերժվի օրինական ծրագիր մը, երեք նիստէ առաջ չը կրնար դարձեալ երեւիլ Ժողովին օրակարգին մէջ:

Յօդ. 72 — Ժողովին որոշմանց արդիւնքը Ատենապետը կը հռչակէ սա բառերով՝

«Ազգային Ժողովն ընդունեց», կամ «Ազգային Ժողովը չ'ընդունեց»:

Յօդ. 73 — Ազգային Ժողովին վերջնական վճիռը նոյն ժամէն գործադրելի է: Ատենապետը՝ Ժողովին կամքը առնելէն ետքը՝ յանուն Ժողովին ստորագրելով կը հրամանէ վճռագիրը, նիստին օրէն թվականեալ, զոր և ատենադպիր մը կ'ստորագրէ: Վճռագիրը Ատենապետին ձեռօք Բարձրաշնորհ Սրբազանին կը տրուի, զոր ինքն ալ ստորագրելով՝ նախազանական հրամանամբ գործադրութիւնը կ'ապահովէ:

Օրինակը Պատրիարքարանի դիւանին մէջ արձանագրուելով օրինաց գրքին մէջ, վճռագիրը կը պահվի Ազգային Ժողովին թանգարանին մէջ:

Ասկէ ութ օրէն՝ Բարձրաշնորհ Սրբազանը պատրիարքական կոնդակաւ կը ծանուցանէ Առաջնորդաց՝ զազգային որոշումը, ի հրահանգ ժողովոց և խորհրդոց:

Յօդ. 74 — Եթէ նաստաոված օրինաց մէջ սահմանադրական այնպիսի կէտեր կան, որ Բ. Դրան վաւերացմանը կը կարօտին, այնպիսեաց համար՝ Բարձրաշնորհ Սրբազանը կա՛մ պատասխանատուութիւնը յանձնկ'առնու իբրև միջնորդ յարաբերութեանց Ազգին և Տէրութեան, և գործադրութիւնը կը հրամանէ պատրիարքական իշխանութեամբ, սպասելով զայդ վաւերացումը. կամ՝ բացառութիւն կը խնդրէ Ժողովէն, փութացնել խոստանալով զայդ վաւերացումը:

Ո՛րն և ըլլայ իր որոշումը՝ Բարձրաշնորհ կը յայտնէ զանի Ժողովին գո՛նէ յաջորդ նիստին մէջ:

Յօդ. 75 — Ժողովն իր որոշումն չը կրնար դառնալ կամ զանի փոփոխել, եթէ որոշեալ խնդրին հեղինակին կողմէն, վարչութեան կամ Պատրիարքին կողմէն՝ գործա-

դրութեան անտեղութիւնն պատճառելով ըստիպողութիւնն չը խնդրվի, որոշումէն զօնէ երեք ամիս ետքը. (տե՛ս ստիպողութեան յօդուածները):

Եթէ ստիպողութիւնը մերժվի, արդէն որոշեալ խնդիրը մէյ մ'ալ չը կրնար ներկայվիլ նոյն ատենական շրջանին մէջ:

Ը. ԳԼՈՒԽ

Բեմական յարաբերութիւնք Ժողովին.

Յօդ. 76 — Ժողովին ուղղակի և ներքին յարաբերութիւնքը իւր Գործադիր իշխանութեան և իւր Վարչութեան հետ են, որոյ անդամք՝ իրենց վերապահեալ նստարանին վրայ բազմած՝ Ժողովին մէջ ձայն ունին, բայց ո՛չ քրէէ իթէ երեսփոխան չեն: — Նոյնպէս և իրենց համարատուութեան խնդրին մէջ ձայն ունին, բայց քրէէ ո՛չ թէ և երեսփոխան:

Ժողովին դիւանը առանց թուղթի գործ ո՛չ կ'ընդունի Վարչութեանէն, ո՛չ կը յղէ Վարչութեան (1):

Յօդ. 77 — Վարչութեան անդամք՝ անձնիւր իր մասին մէջ առանձին՝ իրբեւ պաշտօնեայ Ժողովին՝ պատասխանատու ևն անոր, և Գործադիր իշխանութեան Պետը՝ ընդհանուր պատասխանատու ըստ Սահմանադրութեան:

Այս պատասխանատուութենէն ընդհանուր կերպով կը գերծվի Սահմանադրութեան պատուիրած տարեկան համարատուութեամբ:

Սահմանադրութեան պատուիրած համարատուութիւնը՝ չիմանար եղած անցած դէպ վը

(4) Հրահանգ. — Վարչութիւնը չը կրնար և չ'ունի իրաւասութիւն խնդիր յղէ, վն ի քննութիւն ու արտաժ կերպով կարծիք ցնել, զի քննութիւնը տեղեկագիր կը պահանջէ, և Ժողովը տեղեկութիւն առլու տեղ չ'ունի, իրմէ վեր մարմին չը կայ պաշտօնական, իր քննութեանց ու վէճերուն նըկայ պատուիր. միայն վճռի մը հասնիլ է: Իրեն եկած պատուիր, իր դիւանին վրայ աւանդեալ վճիռ կ'ընդունի և ո՛չ տեղեկագիր:

Վարչութեան ընկերքը խնդրանք մընէ կամ առաջարկութիւն, որոյ համար ստիպողութիւն կրնայ խնդրել:

Ստորագոյն դիւանն մը պաշտօնական թուղթ չը յղվի բարձրագոյնին՝ այլ կը մատուցվի, ինչպէս բարձրագոյնն չը մատուցվի ստորագոյնին՝ ամէկը յղվի:

մասնաւոր գործողութեանց ցանկը, այս տեւական և ընդհանուր վերակերպութիւնները, եղծմանց ու անկանոնութեանց առջեւն առնելու համար նոր հաստատված օրէնքն ու կանոնները, ազգային գործոց անձնիւր ճիւղին իր մասին մէջ ինչ քայլ առած յառաջադէմ և ո՛ր աստիճան բարգաւաճեալ ըլլալը վերջապէս չ'իմանար պաշտօնէին պաշտօն վարած ըլլալը գիտնալ, այլ այն պաշտօնին պարտականութիւնը կատարած կամ ո՛ր աստիճան կատարել կրցածը կ'սպասէ իմանալ: Քանզի պաշտօն և պարտականութիւն մի և նոյն բան չ'իմոնար Սահմանադրութիւնը:

Համարատուութեամբ հասկցածն այն է Սահմանադրութեան, ինչ որ Վարչութեան իւրաքանչիւր մասին համար՝ ո՛չ իրբեւ պաշտօն, այլ իրբեւ պարտականութիւն գծած է իր յօդուածին մէջ, ժամանակին համար պահանջելու նախատեսութեամբ:

Սոյն աչօք կը քննեն դիւանները, սոյն աչօք կը դատէ Ժողովը ըզՎարչութեան համարատուութիւնը:

Եթէ ժամանակին չ'աւանդվին այդ համարատուութիւնք Մ. Դիւանին վրայ, հանդերձ ազգային ելումտից տարեկան պիւտճէով, պատասխանատու կը մնան Վարչութեան անդամք և զլիսաւորապէս գործադիր իշխանութեան պետը, որուն այս մասին հարցում կ'ուղվի Դիւանէն (յօդ. 1):

Յօդ. 78 — Վարչութեան իւրաքանչիւր մասին տարեկան համարատուութիւնք՝ առտենական շրջանին երկրորդ նիստին մէջ՝ տպեալ կ'աւանդվին Ժողովին դիւանին վրայ (յօդ. և 6):

Ատենապետը զանոնք դիւաններուն կը յղէ իրբեւ ստիպող խնդիր (յօդ. 9, 10, 11) Ժողովին կարծիքն առնելէն ետքը ձեռամբարձով առանց վէճի:

Դիւաններէն տեղեկագիր քանի որ հասնի, տեղեկագրերը կ'ընթեռնու և կ'աւանդէ Մ. Դիւանին: Ատենապետը կ'առաջարկէ և Ժողովը կ'որոշէ իւրաքանչիւրին վիճարանութեան օրը:

Յօդ. 79 — Համարատուութեանց քննութեան արդեամբ Ժողովը կամ կը գովէ կամ կը պարտաւէ Վարչութեան ընթացքը, և իր դատավճիռը գաղտնի քրէէով կը յայտնէ: Համարատուութեան չընդունելութիւնը՝ անվստահութիւն կ'ենթադրէ Ժողովին կողմէն համարատու ճիւղին վրայ, որ պարտաւորեալ կը գտնվի հրաժարելու:

Յօդ. 80 — Վարչութեան անդամոց հրաժարականը կամ ուղղակի Ժողովին կը տրվի կամ Պատրիարք Սրբազանին, որ եթէ ընդունի կը հաղորդէ՝ զանի Ժողովին, որ կը հաստատէ զայն ընդունելութիւնը եւ նոր ընտրելեաց ցանկը կը խնդրէ (տե՛ս յօդ. 47): — Ժողովին տրված հրաժարականը եթէ պատճառաբանեալ է, Ժողովը Իրաւասութեան դիւանին եզրակացութեանը վրայ ձեռամբարձով առանց վէճի կամ կ'ընդունի կամ գործադիր իշխանութեան կը յղէ ի տնօրէնութիւն:

Յօդ. 81 — Ո՛ր և է պարագայի մէջ երբ Ժողովին կողմէն անվստահութեան ցոյց կամ կասկած նշմարէ, Վարչութեան այս կամ այն մասը միշտ իրաւունք ունի վստահութեան քրէէ պահանջելու:

Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի միթէ կը տեսնէ՝ այդ քրէէին պէտքը: Այդ քրէէն յաջորդ նիստին կը մնայ, որոյ արդիւնքը Գործադիր իշխանութեան չը դաչիր:

Յօդ. 82 — Ո՛ր ժամանակ ըլլայ երեսփոխան մը կրնայ հարցապնդում ուղղել Վարչութեան ո՛ր և է մասին կամ Պատրիարք Սրբազանին. բայց դրաւոր պէտք է տայ իր այդ խնդրանքն Ատենապետին: — Այդ խընդրանքը կը բացատրէ համառօտիւ հարցման նիւթը և կ'ըսէ որ ո՛ւ ուղղեալ ըլլալը. Ատենապետը կ'ընթեռնու զանի Ժողովին:

Երեսփոխանէ առ երեսփոխան հարցապնդում արգիլեալ է:

Յօդ. 83 — Վարչութեան անդամներէն անի որում անկ է պատասխանել իր կարծիքը տալէն ետքը, Ժողովը կը վճռէ ձեռամբարձով առանց վէճի միթէ կամ լսել այդ հարցապնդումը, և կ'որոշէ օրը:

Իրաւունք է դռնփակ նստել եթէ խնդրէ հարցապնդեալ պաշտօնեայն:

Հարցապնդումն լմնալէն և միջադէպը գոցվելէն ետքը, Ժողովը կը դառնայ իր օրակարգին:

Յօդ. 84 — Պատրիարք Սրբազանին համար անվստահութեան քրէէ չ'առաջարկվիր, և ո՛չ իսկ ինք կրնայ վստահութեան քրէէ պահանջել: Իր անկումը չը կրնար տեղի ունենալ այլ միայն այն ճամբով որով հասած է՝ յիշատակութիւն (յօդ. 13, 50):

Բայց կրնայ ամբաստանուիլ երեսփոխանաց կողմէն Սահմանադրութեան հակառակ

ընթացքի մը համար, կամ անոր գործադրութեան անհոգութեանը համար:

Երբոր կանոնաւոր (յօդ. 55) ամբաստանագիր մ'աւանդվի Մ. Դիւանին վրայ, Ատենապետը զանի կը հաղորդէ Ժողովին և անոր կարծիքն առանց վէճի առնելէն ետքը կը յղէ Ատենապետագ դիւանին նախաքննութեանը:

Այս դիւանին իր տեղեկագրով կամ պարագայէս մերժման կ'եզրակայէ կամ նկատաւան:

Տեղեկագրին եզրակացութեան վրայ Ժողովը կ'արտասանէ իր վճիռը ձեռամբարձով առանց վէճի, և ըստ այնմ կամ կ'անցնի իր օրակարգին եթէ մերժումն արտասանէ, կամ ելք կուտայ ամբաստանութեան եթէ նկատաւանն արտասանէ:

Այս ետքի պարագային մէջ յատուկ մասնաժողով մը կ'ընտրուի (յօդ. 7) ամբաստանութիւնը քննելու համար:

Երբ այս քննիչ մասնաժողովին տեղեկագիրը տպեալ և երեսփոխանաց ցրեալ աւանդվի Դիւանին, յետ ընթերցման եթէ ընթերցումն ըլլայ, Ատենապետը Ժողովին կամ քննաւորով առանց վէճի կը յղէ զայս տեղեկագիրը Ատենապետաց դիւանին, ի վերաքննութիւն:

Վերաքննեալ տեղեկագրին եկած օրը Ժողովը կ'որոշէ վիճարանութեան օրը, և կը դատէ զամբաստանութիւնը:

Այս դատական նիստը դռնփակ է: Ատենապետը զանի կը գումարէ երեսփոխանաց օրինական մեծամասնութեան ներկայութեամբը (յօդ. 50), և եպիսկոպոսաց երիցագոյնին նախագահութեամբը:

Քրէէն գաղտնի է, և ամբաստանողք քրէէ չ'ունին:

Եթէ ամբաստանութիւնն իրաւացի դատվի Ժողովէն, Դիւանը կ'առաջարկէ անվստահութեան քրէէն, որ պարտաւոր իշխանութեան անկումը կ'ենթադրէ, որոյ արդեամբ և յանուն Ժողովին Դիւանը նախագահ եպիսկոպոսին հետ կը խնդրէ Պատրիարք Սրբազանէն իր հրաժարականը, զոր կը պարտաւորի տալ:

Եթէ ամբաստանութիւնն անիրաւի դատվի Ժողովէն, Դիւանը կ'առաջարկէ վստահութեան քրէէն որ անպարտ իշխանութեան հաստատութիւնը կ'ամբապնդէ, և որոյ արդեամբ գոր Դիւանը կը հաղորդէ Պատրիարք Սրբա-

զանին, ամբաստանողը կը պարտաւորին նե-
րում խնդրել Նորին Սրբազնութեանն զուրբաց
նիստի մէջ:

Սոյն օրինակ կրնայ ամբաստանվիլ և
Վարչութեան անձնուր ճիւղ, և ժողովը սոյն
ճամբով կը դիմէ իր դատավճռին:

Յօդ. 85 — Վարչութեան անդամք ալ
կրնան ամբաստանել Պատրիարք Սրբազանը,
բայց պէտք է նախ հրաժարին կամ դադարին
պաշտօնէ. և չեն կրնար ամբաստանել երբ
արդէն Նորին Սրբազնութեան կողմէն վար-
չական փոփոխման մ'առաջարկութիւն աւան-
դեալ է Դիւանին:

Յօդ. 86. — Եթէ Պատրիարք Սրբազանը
Վարչութեան մասնակի կամ ամբողջակի փո-
փոխումն առաջարկէ ժողովին, պատճառա-
բանեալ կ'ընէ 'զայդ առաջարկութիւնը, և
ժողովի Իրաւատութեան դիւանին եզրակա-
ցութեան վրայ՝ կ'ընդունի կամ կ'օրաձգէ
'զառաջարկութիւնը՝ ձեռամբարձով առանց
վէճի:

Զօրաձգումը սա բառերով կը պատճա-
ռարանէ. «ժողովն զՊատրիարք Սրբազանին
ուշադրութիւնը վերստին հրաւիրելով առա-
ջարկեալ փոփոխման վրայ՝ կը յայտարարէ 'զիւր
հաճութիւնը»:

Յօդ. 87 — Եթէ Պատրիարք Սրբազանը
'զիւր հրաժարականը տայ, պատճառարանեալ
պէտք է ըլլայ այդ հրաժարագիրը. ժողովը՝
յետ ընթացման՝ Ատենապետաց դիւանին նա-
խաքնութեանը կը յանձնէ հրաժարագիրը, և
այս դիւանին եզրակացութեանը վրայ՝ պատ-
ճառները քննելով՝ կ'ընդունի կամ չ'ընդունի
առաջարկեալ հրաժարումը: Եթէ չ'ընդունի,
պատճառարանեալ կը հաղորդէ 'զիւր որոշու-
մը՝ Պատրիարք Սրբազանին, որում միայն կը
մնայ որոշել իր ընելիքը:

Յօդ. 88 — Կեդրոնական Վարչութեան
արտաքին յարաբերութիւններէն ծագած խըն-
դիրները անուղղակի կուզան կ'ենեն ժողովին
ատեանը՝ Պատրիարք Սրբազանին միջնորդու-
թեամբը:

Այս ճամբով եկած թուղթերը՝ կամ հրա-
մանագիր է Բ. Իսնէն, կամ կոնդակ վեհա-
չնորհ Կաթողիկոսէն, կամ խնդրագիր Քաւա-
ղանի Կաթողիկոսէն, կամ խնդրագիրն, և
ոական ժողովներէն և Առաջնորդներէն, և
կամ աղերսագիր հասարակութեան կողմէն,
Պատրիարք Սրբազանին ուղեալ. որ ատոնց
մէջէն ժողովին ներկայելիսերը կը հաղորդէ

անոր՝ կցելով միանգամայն Վարչութեան կար-
ծիքը նոյն խնդրին վրայ և պարտ ու պատշա-
ճն իմացնելով:

Ժողովն՝ ըստ պատշաճին՝ կամ Վարչու-
թեան կը յղէ ի տնօրէնութիւն, կամ իր դի-
ւանաց նախաքնութեանն կ'անցընէ խնդիրը,
կամ մասնաժողովէ՝ որ և կամ Ատենապետաց
դիւանէն, և ատոնց տեղեկագրին վրայ կը
վիճէ, կ'որոշէ իր պատասխանը և կը հաղոր-
դէ իր Նախագահին առ ի տալ որում անկ է:

Յօդ. 89 — Հասարակութեան կողմէն
Աղագային ժողովին մատուցուելու հանրագիր,
աղերսագիր, ստորագրեալ ըլլալու է. ստո-
րագրողաց երկիրը, արհեստն ու բնակարանը
նշանակեալ, կամ գոնէ չորսինը՝ եթէ շատ-
ւոր են:

Ստորագրութիւնք վաւերացեալ ըլլալու
են տեղին Թաղական Սորհուրդէն:

Եթէ այդ վաւերացումը զլացեալ է, այդ
զլացումը նշանակելու են ստորագրողք աղեր-
սագրին աւարտը:

Հանրագիր թէ աղերսագիր Նախագահ
Սրբազանին պէտք է ուղղի և անոր արվի
կամ Պատրիարքարանի դիւանատան՝ մէկ կամ
քանի մը անձանց ձեռօք:

Ժողովարանին բակը խոնեալ բազմու-
թեամբ բերված աղերսագիր ո՛չ նախագահը
կրնայ ընդունել ո՛չ Ատենապետը:

Երեսփոխանի մը արգիլեալ է միջնորդ
կանգնիլ բազմութեան և ժողովին մէջտեղ.
պարագային ծանրութեան համեմատ ենթակայ
կ'ըլլայ 102 յօդուածին տնօրինած պատիժնե-
րէն մէկուն:

Յօդ. 90 — Աղերսագիրներն իրենց եկած
կարգովը կը տօմարագրէ Պատրիարքարանի
դիւանապետը աղերսագրոց տօմարագրքին մէջ,
նշանակելով աղերսագրին կարգին թիւը, ըս-
տօրագրողին երկիրը, արհեստն ու բնակարանը
նոյնպէս և խիտ համառօտ կերպով աղերսին
առաքկան:

Տօմարագրեալ աղերսագիր Նախագահին
կողմէն դիւանապետին ձեռօք կ'աւանդվի Մ.
Դիւանին, և Ատենապետը՝ ժողովին համա-
ռօտ մը ծանուցանելով նիւթը՝ կը յղէ Յարա-
բերութեանց դիւանին, ժողովին կարծիքն առ-
նելէն ետքը ձեռամբարձով առանց վէճի:

Եթէ նոյն խնդիրին վերաբերեալ խնդրով
մ'ըզբաղած է յատուկ մասնաժողով մը կամ
ուրիշ դիւան մը, ուղղակի հոն կը յղէ: Զայս

յղումը Յարաբերութեանց դիւանն ալ կրնայ
ընել:

Ո՛ր և է երեսփոխան կրնայ լիովին ծա-
նօթութիւն առնուլ աղերսագիրներէն, անոնց
քննութեանն զբաղող դիւանին դիմելով:

Յօդ. 91 — Ամէն մէկ աղերսագիր՝ տե-
ղեկագրի մը և որոշման մը նիւթ է քննիչ
դիւանին մէջ:

Տրված որոշումն՝ իրբեւ պատասխան՝ ի-
մաց կը տրվի աղերսագրողին, աղերսագրին
կարգին թրահամարովը, որոյ առջեւ նշա-
նակեալ է այդ որոշումը:

Քննիչ դիւանը կամ մասնաժողովը ժո-
ղովին ատենապետը կը բերէ այն աղերսագիր-
ները՝ զորս Վարչութեան յղել կ'եզրակայէ, և
զանոնք որ օգտակար կը դատէ ժողովին քնն-
նութեանն ենթարկել:

Առաջնութիւն կամ ստիպողութիւն կր-
նայ խնդրվիլ աղերսագրի մը քննութեան հա-
մար. ժողովը կ'որոշեն սոյն պարագային մէջ՝
ձեռամբարձով առանց վէճի:

Երեք ամսի մէջ գոնէ՝ Վարչութիւնը կը
ծանուցանէ ազգային օրագրի միջոցով ի՛նչ ելք
որ տուաւ ժողովէն իրեն յղեալ աղերսագրոց:

Թ. ԳԼՈՒԽ

Ներքին եւ արտաքին բարեկարգութիւն
Ազգային ժողովին.

Յօդ. 92 — Ժողովին բարեկարգութիւնը
յանուն ժողովին՝ Նախագահ Սրբազանը կը
հոգայ, անձամբ կամ իւր փոխանորդին ձե-
ռօք:

Փոխանորդ Հօր կը վերաբերի նաեւ ժո-
ղովարանին նիւթական պիտոյից հոգը:

Յօդ. 93 — Ո՛չ ոք օտար՝ ո՛չ մէկ պատ-
ճառանօք՝ չը կրնար մտնել երեսփոխանաց
բազմած չըլլապատին մէջ:

Յօդ. 94 — Ժողովուրդին ունկնդրու-
թեան իրաւունքը լիովին վճարված է ատե-
նագրութեանց հրատարակմամբը, որ իրբեւ
արձագանդ ժողովին՝ համօրէն ազգին լսողու-
թեանը կը հասնի: Ներկայութեամբ սահման-
եալ ունկնդրութեան թողտուութիւնը չնորհ
մըն է ժողովին կողմէն. զոր Նախագահը
կամ Ատենապետը կը տնօրինեն:

Վերնատունը տիկնայց յատկացեալ է:
Դասը՝ եկեղեցական ունկնդրաց, գաւա-
ռական և թաղական ժողովականաց ու Սոր-
հրդականաց, նախկին երեսփոխանաց, ազգա-
յին լրագրագետաց և պատուաւոր օտարազգ-
եաց յատկացեալ է. զորոնք բարապանք կ'ըն-
դունին ու կը տեղաւորեն:

Նիստին բոլոր տեւողութեան ատեն՝ ուն-
կընդիրք լուռ կենալու են ու նստած:

Հաւանութեան կամ դժգոհութեան ձայն
բարձրացնողը իսկոյն դուրս կը հանվի ուն-
կընդրութեան տեղէն՝ բարեկարգութեան պա-
հպան բարապանաց ձեռօք, հրամանաւ Նա-
խագահին կամ Ատենապետին:

Յօդ. 95 — Եթէ ժողովը ազգայնոյց ըլ-
լայ, և Ատենապետը կամ Նախագահը չը կա-
րենան հանդարտութիւնը վերահաստատել,
կ'աղդարարեն թէ նիստը դադարեցնելու պիտի
պարտաւորին:

Երկրորդ ապարդիւն ազգէն ետքը՝ նիս-
տը կը վերնայ կէս ժամի չափ: — Կէս ժա-
մէն՝ նիստ ու վիճարանութիւն դարձեալ կը
շարունակուին:

Եթէ ազմուկը նորէն օկօի, Ատենապե-
տը ժողովին իմաց տայէն ետքը՝ կրնայ վի-
ճարանութիւնը փակեալ յայտարարել, և ան-
միջապէս քրէտարկութեան ձեռնարկել, եթէ
տեղի կայ:

Եթէ ազմուկը մէյ մ'ալ սկրսի ու քրէտ-
արկութիւնը խափանէ, կամ ժողովին մէջ
բռնութեան դիմողներ ըլլան, իսկոյն կը վեր-
նայ նիստը:

Յօդ. 96 — Պատրիարք Սրբազանին հո-
գըն է հսկել Ազգային ժողովին ներքին և
արտաքին ապահովութեան:

Առ այս պէտք եղած միջոցները ձեռք
կ'առնու, հարկաւոր դատած հրամանները
կուտայ, և ըստ հարկին՝ պահապան զօրու-
թիւն կը խնդրէ ոստիկանութենէն, իր հրա-
մանին տակ գործելու:

Պատրիարքական իշխանութեան սահմա-
նը՝ թէ՛ Ազգին և թէ՛ տէրութեան առջեւ՝
իր ուխտն ու պատասխանատուութեան սահ-
մանն է:

Ժ. ԳԼՈՒԽ

Պատժական Կանոնք

Յօդ. 97 — Ազգային ժողովին կանոնադրանց անդամոց սնորհնվելու բարեկարգական պատիժները՝ չորս աստիճան՝ ասոնք են.

- 1. Ի կարգ կոչում:
- 2. Ատենագրութեամբ ի կարգ կոչում:
- 3. Յանդիմանութիւն:
- 4. Պարսաւանօք յանդիմանութիւն:

Մեղմ պատիժները Ատենապետը կը տընօրինէ. խիստ պատիժները ժողովը կ'արտասանէ:

Յօդ. 98 — Ի կարգ կը կոչվի այն ատենաբանն որ կարգէն խոտորի, ա'յն անդամը որ 28 յօդուածին պատուիրանքը չը յարգելով կամ ո'ր և է կերպով բարեկարգութիւնը խանդարէ:

Յօդ. 99 — Ատենագրութեամբ ի կարգ կը կոչվի ա'յն անդամն որ մի և նոյն նիստի մէջ երկու անգամ, կամ երկու յաջորդ նիստերու մէջ ի կարգ կոչվեցաւ:

Յօդ. 100 — Ատենապետն ինքնին անկախ հեղինակութիւն ունի ի կարգ կոչելու:

Սօսքը կը շնորհվի այն ատենաբանին որ ի կարգ կոչեալ՝ կը հպատակի Ատենապետին հեղինակութիւնն ու կը խնդրէ՝ զինքն արդարացնել:

Անի որ՝ խօսելու արտօնութիւնը չ'առած զինքն ի կարգ կոչել տուաւ, խօսք չ'ունի՝ զինքն արդարացնելու համար, այլ միայն ատենապետին վերջերը, եթէ Ատենապետը չը հաճի:

Եթէ Ատենապետը ետ չ'առաւ ի կարգ կոչումը, ատենադպիրք զանի կը նշանակեն ատենագրութեան մէջ:

Յօդ. 101 — Երբոր ատենաբան մը մի և նոյն նիստի մէջ երկու անգամ ի կարգ կոչվի, ժողովը կրնայ Ատենապետին առաջարկութեան վրայ արգիլել զանի խօսքէ այնուհետեւ այն նիստին մէջ:

Ժողովը կ'որոշէ ձեռամբարձով առանց վէճի:

Յօդ. 102 — Յանդիմանութիւն կ'արտասանվի այն անդամին դէմ.

1. Որ ատենագրութեամբ ի կարգ կոչումէն ետքը չը դառնար ի կարգ և ի պարտականութիւն:

2. Որ մի և նոյն նիստի մէջ երեք անգամ կամ յաջորդապէս երեք նիստի մէջ ի կարգ կոչման պատժին արժանանայ:

3. Որ ժողովին մէջ աղակայոյզ տեսարան մը յարուցանելու նախաձեռնէ, կամ օրէնդրական աշխատանքէ հաւաքապէս ձեռննկանութիւն թելադրէ:

4. Որ իր պաշտօնակցաց մէկուն կամ մէկ մասին դէմ նախատինք կամ գրգռիչ սպառնալիք ուղղէ:

Յօդ. 103 — Պարսաւանօք յանդիմանութիւն կ'արտասանվի այն անդամի դէմ.

1. Որ պարզ յանդիմանութեան դիմադարձութիւն ընէ:

2. Որ բանութեանց դիմէ կամ ունկրնդրաց յարձակման ձայնատու ըլլայ:

3. Որ հայտնի կամ ընկերին ձեռք վերցնէ:

4. Որ ըզժողովն անարգէ, կամ անոր մէկ մասը, կամ Ատենապետը:

Յօդ. 104 — Պարսաւանօք յանդիմանութիւնը հարկ կը դնէ յանցաւոր երեսփոխանին իսկոյն ատենանք թողուլ դուրս ելնել և զգուշանալ երեւիլէ մէյ մ'ալ նոյն նիստին մէջ:

Եթէ չ'ելնէ, Նախագահը հրաման կ'ընէ. եթէ այս հրամանին անհնազանդութիւն ըլլայ, նիստը կը վերնայ, և յանցաւորին մեկնիլէն ետքը կրնայ դարձեալ շարունակվիլ. բայց անհնազանդ յանցաւորը յաջորդ նիստին մէջ խօսելու իրաւունք կը կորուսանէ:

Յօդ. 105 — Յանդիմանութիւնները թ' պարզ և թէ՛ պարսաւանօք ժողովը կ'արտասանէ ձեռամբարձով առանց վէճի, Ատենապետին յանուն կանոնադրութեան առաջարկութեանը վրայ, և Նախագահը կը գործադրէ:

Երեսփոխանը որու դէմ առաջարկվի այս բարեկարգական պատիժներէն մէկը կամ միւսը, միշտ իրաւունք ունի իր արդարացման համար խօսելու կամ յանուն իւր խօսեցնելու իր պաշտօնակցաց մէկը:

Ժողովին արտասանաց պատիժները ատենագրութեանց մէջ կ'արձանագրվին, իսկ այս վճիռներուն դէմ հետեւի յանդգնողին անունը, եթէ ըլլայ այդ աստիճան կանոնադանց հասարակաց թերթերով ալ կը տարածայի, ի հրապարակ տալով ատենագրութեան այն քաղուածը ուր պատիժը յիշեալ է:

Յօդ. 106. — Կ'ընկնի երեսփոխանութեան այն անդամը որ ժողովարանին մէջը կամ շուրջը թէր մը գործէ, կամ իր օրէնդրական պաշտօնին տեւան ատեն պատժական ատենանի մը կողմէն դատապարտութիւն մը կրէ, որ զրկէ զինքը՝ իբրև բարոյապէս անբաւական՝ ընտրելութեան իրաւունքէն, ըստ Սահմանադրութեան:

Պաշտօնանկութեան ժողովէն կ'արտասանվի՝ յետ օրինաւոր ապացուցման:

ԺԱ. ԳԼՈՒԽ

Բացակայութիւն

Յօդ. 107. — Բացակայութեան հզօր և բանաւոր պատճառներ են՝

- 1. Ճամբորդութիւն:
- 2. Հիւանդութիւն:
- 3. Հրդեհ թաղին մէջ:
- 4. Մանր հիւանդ տան մէջ:

Յօդ. 108. — Նախագահ՝ Սրբազանին ներկայութիւնը միշտ կարեւոր է ժողովին շուրջն ու պատկառանքն աւելցնելու համար, և երբեմն անհրաժեշտ՝ ժողովին ներքին և արտաքին ապահովութեանը համար:

Երբոր բանաւոր պատճառով կամ ազգային կարեւոր ու ստիպող գործով մը զբաղեալ՝ ստիպվի բացակայութեան, իր տեղ առօրեայ Նախագահ մը կը ցուցնէ:

Յօդ. 109. — Մարդ դիւանին անդամոց ներկայութիւնը միշտ հարկաւոր է ատենանի բացման ճիշտ որոշեալ ժամուն, մանաւանդ Ատենապետինն ու խմբագիր ատենադպիրնը անհրաժեշտ է, մէկը ատենանք բանալու համար, միւսը ատենագրութեան վրայ դիտողութեանց պատասխանելու համար:

Երբոր Ատենապետը հզօր պատճառով մը ստիպվի բացակայութեան, պարտաւոր է բաւական ժահանակ առաջ իմաց տալ երկու դերատենապետաց միանգամայն, զի եթէ մէկն ալ նմանապէս անյադթելի ուժի մը տակ գանդվի՝ կարենայ միւսին իմաց տալու միջոց ունենալ: Նմանօրինակ կը պարտին իրարու իմաց տալ և ատենադպիրք:

Ժողովին պատուարժանութեանը դպչելը անտեղութիւն է՝ դիւանին անդամոց բացակայութեան երեսէն՝ առօրեայ դիւանով ատենանք բանալու հարկին տակ գտնվիլ (յօդ. 2):

Յօդ. 110. — Հրաժարեալ կը համարվի ա'յն երեսփոխանը.

1. Որ առանց բանաւոր պատճառի երկու յաջորդ նիստերու բացակայ մնալով, երրորդին անձամբ չը պատասխանէ նախագահական յատուկ կոչմանը. ասի՝ իր յանձնառած պաշտօնին անհոգութիւն ըրաւ երեք անգամ:

2. Որ՝ առանց բանաւոր պատճառ յայտնած ըլլալու՝ ատենական շրջանի մը երեք անբաւական նիստերու մէջ անուանական կոչման չը պատասխանէ. ասի՝ Ազգին գործը ետ մնալու պատճառ եղաւ երեք անգամ:

Այս դատի անդամները՝ եռապատիկ պարտազանց՝ 102 յօդուածին խտուրթեանը կը հանդիպին, որ բացակայութեան վերադարձով այսքան կը ծանրանայ և կ'ըլլայ վերջնական բացակայութիւն, զոր ժողովը կը վճռէ ձեռամբարձով առանց վէճի՝ Ատենապետին յանուն կանոնադրութեան առաջարկութեանը վրայ(1):

Պարտազանցութեամբ հրաժարեալ համարելոց անունները՝ ատենագրութեանց մէջ նշանակվելէն զա՝ ասարակաց թերթերն ալ կը տանին ընտրողաց ականջը:

Յօդ. 111. — Թէ՛ կանոնին հրաժարցուցած, թէ՛ ինքնին հրաժարողաց և թէ՛ վախճանեալ երեսփոխանաց տեղ նոր ընտրութիւնները ատենական տարւոյն վերջը կ'ըլլան ընդհանուր ընտրութեանց ատեն:

Սակայն եթէ ժողովէն պակասող անդամոց թիւը օրինական թիւին քառորդն անցնելով՝ իսկական թիւին ամբողջութիւնը խորի սպառնայ (յօդ. 49): Ժողովը կրնայ՝ ե'րբ որ ըլլայ՝ պատահական ընտրութիւն հրամայել, Նախագահ՝ Սրբազանին կամ Դիւանին առաջարկութեանը վրայ:

Եթէ դիւանին մէջ պատահի հրաժարումը, անմիջապէս յաջորդ նիստին կ'ըլլայ ընտրութիւնը (տե՛ս յօդ. 5):

(1) Հրահաճ. — Դիւանը պատժատեար մ'ունի սոմարաձե, որոյ մէջ անձիւր պատիժ իր երկու էջն ունի դէմէ դէմ. հոն կը նշանակեն ատենադպիրք անձիւր նիստին մէջ տեղի ունեցած պատիժը, նոյնպէս և բացակայութիւնքը: Ամէն նիստին վերջերը, նոյն տեսքը աչքէ անցնելով՝ եթէ կայ պարտազանցութեան ատիժանք հասած անուն՝ ցանկը կուտան Ատենապետին, որ զանի կը կարգայ և ժողովը կ'արտասանէ անոնց հրաժարեալ համարումը:

ՎԵՐՁԻՆ ՅՕԴ. — Եթէ ատենական շըր-
ջանի մը մէջ երկու անգամ միայն՝ յաջորդա-
պէս թէ՛ ընդմիջապէս՝ նիստը բոլորովին ան-
բաւական մնալով տեղի չ'ունենայ կամ վեր-
նայ, առկ որոշող մասին բացակայութեան ե-
րեսէն, և երրորդին՝ եթէ երեսփոխանք նա-
խագահական յատուկ կոչնագրին խուլ մնան
ու նիստը դարձեալ անբաւական թողուն
(յօդ. 52), բացակայ մեծամասնութիւնը՝ իր-
բև եռապատիկ պարտազանց՝ ըստ կանոնի
հրատարեալ կը համարվի (յօդ. 110):

Եթէ այդ անակնկալ այլ ո՛չ անկարելի
դէպք տեղի ունենայ, Նախագահ Սրբազանը
անհրաժեշտ հարկին մէջ կը գտնվի ստիպողա-
կան ատեն քանալու ո՛ր և է թըլով ներկայ
անդամոց, որք կը հասնեն մեծամասնու-
թեան բացակայութիւնը, կ'արտասանեն 110
յօդուածին տնօրինած արժանահաս վճիռը, և
զ'ատենագրութիւնը կ'ստորագրեն:

Հետեւեալ օրը՝ ստիպողական ատենին
վճիռն հրատարակելով, միանգամայն և բա-
ցակայից տեղ նոր ընտրութեանց հրահանգները
արևով ընտրող ժողովոց, Պատրիարք Սրբա-
զանը՝ իբրև աւանդապահ ազգային գործա-
դիր իշխանութեան՝ անմիջապէս կը հոգայ
զ'Ազգային ժողովին ամբողջացումը:

ԽՄԲԱԳԻՐ
ՌՈՒՍԻՆԵՍԱՆ

ԸՆԿԱՆՆԱԼ ՄԻԱԶՍՅՆ ՀԱԻԱՆՈՒԹԵԱՄԲ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

Ի Յիս Ե. 4 Հոկտեմբեր 1874

ԱՏԵՆԱԳԻՐ ԱՏԵՆԱՊԵՏ
Ս. Պ. Պ. ՓԱՓԱՋԵԱՆՑ ՌՈՒՍԻՆԵՍԱՆ

ՅԱԻԵԼԵԱԼ ԵՒ ԲԱՐԵՓՈՒԵԱԼ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԲ

ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

Ա

(Ը. Նիս 1876 ամի. երես 138)

Մանրակշիւ խնդրոց լուծման ժամանակ,
թեր ու դէմ քուէ տուողաց անուններն ատե-
նագրութեանց մէջ յայտնապէս պիտի նշանակու-
ուին:

Բ

(ԻԱ. Նիս 1878 ամի. երես 496)

Վարչութիւնն փոխանակ վարչական գոր-
ծոց տեղեկագրի մը, որ մինչև ցարդ համա-
րատուութեան համար գործածուած ձեւն էր.
պարտի հարկ տեսած ատեն կամ գէթ Ազգա-
ին ժողովոյ նոր շըջանին բացման միջոցին
հրատարակել ՍՊԻՏԱԿ ՏԵՏԻ անունով, պաշ-
տօնական գրութեանց տեսար մը, այն գրու-
թեանց միայն որ կրնան ի լոյս գալ ամենայն
Երեսփոխանք միշտ ազատ են անցեալ ե-
ղելութեանց համար պաշտօնական դիւաննե-
րուն դիմել և ճշմարտութեան վերահաս ըլլա-
լու համար պէտք եղած հետազոտութիւնն ընել
ըստ պատշաճից օրինաց, որով առիթ կ'ունե-
նան եթէ կամք ընեն՝ հարցում կամ հարցա-
պնդում ուղղել որ եւ է գործոց վրայ և այն
կերպով ալ համարառութիւն կատարել:

Գ

(Դ. Նիս 1878 ամի. երես 114-120)

Յօդ. 1. — Ազգային ժողովոյ տարեկան
շըջանի բացման նախագահական ճառին որ
գրաւոր կերպով պէտք է ըլլայ, ժողովը կը
պատասխանէ ուղերձով մը, զոր Ատենագի-
տաց Դիւանը կը ծրագրէ և ժողովը վիճարա-
նութեամբ կը խմբագրէ իւր երրորդ կամ չոր-
րորդ նիստին մէջ, ուր Ս. Պատրիարքը փո-
խանորդով մը կը նախագահէ ժողովին: Սոյն
ուղերձը Մայր Դիւանին միջոցաւ կը ներկա-
յացուի Ս. Պատրիարքին:

Յօդ. 2. — Իւրաքանչիւր ատենի սկիզբն
ատենական գործողութեանց համար առ ա-
ռաւելն մէկ ժամ կը զոհուի. ի լրման ժամուն՝
անկատար մնացած գործողութիւնք յաջորդ
նիստին կը ձգուին, բացի ժողովով ստիպողա-
կանութիւն տրուած խնդիրներէն որ առ ժա-
մայն կը լուծուին:

Յօդ. 3. — Դիւաններուն կամ մասնա-
ւոր յանձնախումբերու քննութեան յանձնուած
անձներ խնդրոյ համար պայմանաժամ կ'որոշ-
ուի տեղեկագրութեան զոր ժողովը Ատենա-
պետին առաջարկութեան վրայ ձեռամբարձով

կը սահմանէ առանց վիճարանութեան և ը-
լոր յանձնարարեալ խնդրոց ցուցակը ժողովա-
րանին մէջ յարաժամ ի տես ամենից կը տրուի
Ատենագետին խնամօք:

Յօդ. 4. — Որ և է դիւան կամ յանձ-
նախումբ պարտաւոր է իր քննութեան յանձ-
նուած խնդրոյն տեղեկագիրը պայմանեալ ժա-
մանակին բերել և կամ չկրնար բերելուն
պատճառը գրաւոր բացատրել ժողովին: Պայ-
մանաժամին տեղեկագիր կամ բացատրութիւն
չբերող դիւան կամ յանձնախումբ ազդարա-
րութիւն կ'ընդունի Դիւանէն յատենի ժողո-
վոյ. և երկրորդ անգամ պայմանաժամ որոշ-
ուելով, եթէ դարձեալ պարտազանց գտնուի,
դժգոհութեան քուէ կը տրուի ժողովէն և
տեղն ուրիշ մը կ'ընտրուի:

Յօդ. 5. — Ա. Իւրաքանչիւր երեսփո-
խան իրաւունք ունի երբ որ ուզէ որ և է
գործի կամ խնդրոյ մը վրայ հարցունմ կամ
հարցապնդունմ ընել Ազգ. վարչութեան հար-
ցումը տեղեկութիւն ստանալու կամ եղելու-
թիւն մը ստուգելու համար կ'ըլլայ և պա-
տասխանը պարզ տեղեկութիւն է. իսկ սար-
ցապնդումը քննադատական ձգտում ունի և
պատասխանը մինչև տարուան մը համարա-
տուութիւն է:

Բ. Հարցում կամ հարցապնդում գրաւոր
կ'արձանագրուի Մայր դիւանին որ ատենա-
կան գործողութեանց կարգը կը հաղորդէ զայն
ժողովին և կը յղէ առ որ ուղղելի է ի պա-
տասխանատուութիւն, որ պարտաւոր է ՀՍ-
ՏԻԵԱԼ ՆԻՍԻՆ կարծիքը յայտնել, եթէ
հարցման կամ հարցապնդման հեղինակն ստի-
պողութիւն չը խնդրէ և կամ ժողովն չընդու-
նի ստիպողութիւն: Իսկ հակառակ պարագա-
յի մէջ վարչութիւնը պարտաւոր է նոյն նիս-
տին վերջերը յայտնել կարծիքն, ի պատաս-
խանի հարցման կամ հարցապնդման:

Գ. Վարչութեան կարծիքը կամ ուղղա-
կի պատասխան է հարցման կամ հարցապնդ-
ման նիւթ եղող խնդրոյն և կամ առժամա-
նակեայ՝ կատարելապէս պատասխանելն ան-
կարելի կամ անպատշաճ ըլլալուն յայտարա-
րութիւնը: Սոյն վերջին պարագայի մէջ վար-
չութիւնը պարտաւոր է պայմանաժամ ցոյց
տալ և պատրաստ գտնուիլ նոյն ժամանակ
պատասխանելու, եթէ հարցումն կամ հար-
ցապնդումն կը կրկնուի:

Դ. Վարչութեան կարծիքը կամ պատաս-
խանը լուծելէն ետքը Ատենագետն հարցման
խնդիրը կը գոցէ իւր միջադէպ և կ'անցնի
օրուան կարգին: Իսկ եթէ հարցապնդում կը
կատարուի, վարչութեան հաւանութեամբ օրը
կ'առաջարկէ վիճարանութեան և ժողովը զայն
կը սահմանէ ձեռամբարձով առանց վիճարա-
նութեան:

Ե. Որոշեալ օրը հարցապնդման վիճա-
րանութիւնը տեղի կ'ունենայ. հարցապնդող
և հարցապնդեալ՝ որքան անգամ որ պէտք
ըլլայ, իսկ ուրիշ երեսփոխանի ըստ կանոնի
մինչև երկու անգամ խօսելէն ետքը վիճա-
րանութիւնը կը փակուի և պատճառարան-
եալ օրակարգի մը քուէարկութեամբ վերջ կը
տրուի հարցապնդման խնդրոյն, եթէ ժողովն
պատշաճագոյն չը դատէ պարզ և անխառն
օրակարգն քուէարկելով փակել միջադէպը:

Յօդ. 6. — Ազգ. ժողովն չորս անգամով
Ելեւմտից յանձնախումբ մը կ'ընտրէ իւր մէ-
ջէն, որ ազգային պիւտածէին մէջ Ազգ. ժո-
ղովոյ համար սահմանուած գումարը վարչու-
թեան ընդունելով՝ կը հօգայ ժողովին ասպա-
գրական, կահ կարասեաց և ուրիշ ամէն կար-
գի ծախքեր, և տարեգլխին հաշիւը կը ներ-
կայացնէ Ազգ. ժողովին:

Յօդ. 7. — Ազգ. ժողովին կանոնական
նիստերուն օրն ու տեղին՝ պատշաճ տե-
սած ատեն՝ Ս. Նախագահը Մայր Դիւանին
հետ կանխաւ խորհրդակցելով կ'որոշէ հարկ
եղած փոփոխութիւնը:

Դ

(ԺԱ. եւ ԺԲ. Նիս 1880 ամի.
երես 212 եւ 331)

Յօդ. 1. — Ժողովատեղին Գում գարուէն
փոխադրեալ է ի Ղալաթիա:

Յօդ. 2. — Առանց օրինաւոր պատճառի
երեք անգամ բացակայ եղող երեսփոխանին
անունը՝ Դիւանը կը ծանուցանէ ժողովին և
կոչնագրին մէջ ալ յատկապէս կը յիշեցնէ ի-
րեն՝ որ երրորդ բացակայութիւն ունեցած է
արդէն և եթէ չորրորդ անգամ ալ բացակայ
մնայ ըստ օրինի հրատարեալ պիտի համար-
ուի:

Ե

(ԺԳ. Նիս 1880 ամի. երես 475-477)

Յօդ. 1. — Ժողովոյ գումարման յատ-
կացեալ Ուրբաթ օրերն Հինգշաբթիի փոխ-
ուած է:

Յօդ. 2. — Փոխանակ կէս օրէն յետոյ
գումարուելու՝ փորձի համար կէս օրէն 3
ժամ յառաջ պիտի գումարուի ժողովը:

Յօդ. 3. — Բացակայութիւն և հրատա-
րում նշանակող գրութիւնք ատենին բացու-
մէն մինչև կէս ժամ առաջ պիտի աւանդուին
Ատենագետին:

Յօդ. 4. — Առաջարկութիւն, հարցում,
հարցապնդումը, խնդրագիր, տեղեկագիր և այլն
նշանակող գրութիւնք ատենին բացումէն
մինչև մէկ ժամ առաջ պիտի աւանդուին Ա-
տենագետին:

« Ազգային գրադարան



NL0227066

42.648